Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

ԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ԱՐՁԱԳԱՆՔ"
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելիամինովսկի փողոց, № 22, տուն Խանդալամեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ։

Օտարաքաղաքացիք պէտք է գրեն՝ Тифлисъ, Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «Ardzagang»։

Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն և օտար լեզուներով։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նոր միտինգներ։
Արժան Մկրտիչ Սանասարեանին։
Հայկական խնդիրը և Կ. Պոլսի պատրիարքը։
Նոր համակրելի բարեփոխութիւն։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Նոր անզգութիւններ Անգօրխայի գաւառում։ Կ. Պօլսից։ Իտալական հիւպատոսարան Կարինում։ Շնորհակալութեան ուղերձ սուլթանին։ Մի պաշտօնական հերքման մասին։ Արտաքին գործոց նախարարի Թեկնածու։ Ռուսաց տարրական դպրոցներ Կարսի նահանգում։ Կովկասի նահանգապետների նիստերը։ Կովկաս գտնուող պարսկահպատակները։ Յովհ. Յովնանեանի ժառանգների նուէրը։ Նամակ խմբագրութեան։ Բագուից։ Վերջին դիմումն նախկին ուսանողներին։ Աշակերտական հարցաքննութեանց վերաբերեալ բացատրութիւն։ Նուագահանդէս յօգուտ ձրի ճաշարանի։ Հին-Նախիջևանից։ Սամսոնից։ Օձունից։ Մղարթից։ Երկրորդ փոխատու գանձարան Բագւում։ Նպաստ յօգուտ յունադաւան մայր եկեղ. շինութեան։ Տպագրական գործի ցուցահանդէս։ Փող. խորհ. որոշումը։ Թիֆլիզում եղանակի փոփոխը։ «Մշակի» նոր ննջամիտ ոտնձգութիւնները։
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.— Նամակ Բասենից։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Դէպի անցած գնացած օրերը։
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՑՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՐ ՄԻՏԻՆԳՆԵՐ

(«The Daily News» 30 յունվարի)

Երէկ երեկոյեան մի միտինգ գումարուեցաւ Մանչեստրի Town-Kall-ում (քաղաքատանը) Լօրդ-Մէյի նախագահութեամբ, ուր միաձայն վճռեցին պահանջել Բրիտանիայի կառավարութիւնից, որ նա փութայ ապահովել Հայաստանում տեղի գրաւած կոտորածների ու զրկանքների մի լիակատար և անկողմնակալ քննութիւն և վկաների իրական հովանաւորութիւն։

Զայների միութեամբ ընդունուեցաւ և հետևեալ որոշումը. «Այս ժողովը պարտք է դնում Վեհափառ Թագուհու կառավարութեան վրայ՝ նախաձեռն լինել միւս մեծ պետութիւնների միաբանութեամբ պահանջելու Բարձրագոյն Դռնից, որ դա կատարէ Բեռլինի դաշնագրութեան 61-րդ յօդուածն և որոշ ու ճշմարիտ ռէֆօրմներ մտցնէ հայկական նահանգների վարչութեան մէջ՝ բնակիչների կեանքը, պատիւն ու ստացուածքը ապահովելու համար»։

Ի նպաստ այդ որոշումների փաստաբան հանդիսացան Պարլամենտի անդամ սեօր Հարդուրբը, Պարլ. ա. միստր Հօլլանդը, Պ. ա. միստր Ռուէն, Պ. ա. միստր Բոբին, կանոն Հիքսը, կանոն Կէլլին, գերապ. Հայր Վօգանը, գերապ. Ռ. Ստրէնլին, գերապ. Ջ. Սկլատերը և սեօր Ջ. Հարվուդը։ Ատենախօսութիւնների նիւթ եղան նաև անգլիական թերթերի դէմ թիւրք կառավարութեան կողմից յարուցուած արգելքները։

Մեր Հէյվուդի յատուկ թղթակիցը հեռագրում է մեզ այս գիշեր.

«Միդլըտոնի ազատականների ճիւղը մի մեծ միտինգ կազմեց այս երեկոյ, ուր միաձայն որոշեցին հետևեալը. «Այս միտինգը զզուանք և զայրոյթ է յայտնում՝ երկար տարիներէ 'ի վեր Բ. Դռան հաւանութեամբ կամ տրահաճութեամբ հայերի դէմ շարունակ գործուող հարստահարութեանց և ճնշումների առթիւ, և տեսնելով որ սուլթանը վերին աստիճանի անփոյթ է կատարել Փարիզի և Բեռլինի դաշինքներով յանձն առած պարտքերը՝ իւր մահմեդական հպատակների հետ հաւասար դիրք տալու քրիստոնեայ հպատակներին և ապահով ու անդորր վիճակ շնորհելու դրանց,—բողոքելով աղաչում է Վեհափառ Թագուհու կառավարութիւնից, որ նա դաշինքները ստորագրող միւս մեծ պետութիւնների հետ միասին հարկադրէ Բ. Դռան իրագործել իւր հանդիսաւոր խոստումները հայոց նկատմամբ, և պաշտպանէ հայերին ամենօրեայ զրկանքներից ու թշնամանքից, և որոշում՝ ներկայ վճռի պատճէնը հասցնել Առաջին Նախարարին և Արտաքին գործերի նախարարութեան»։

Անցեալ օր դիսիդէնտ (այլակրօն) քահանաների Միացեալ Ընկերութեան Ատենադպիրը հաղորդեց Արտաքին գործերի Նախարարին երիցական (presbyterian), միաբանական (congregational) և մկրտող (babtist), անդամների միաբան ցանկութիւնը, որ է ներկայանալ նրան Արտաքին գործերի նախարարութեան մէջ և մատուցանել յատկապէս Փոքր-Ասիայի հայոց վիճակը քննելու համար մի քանի օր առաջ գումարուած միտինգի որոշումը։ Լօրդ Կիմբերլէյը, պատասխան տուաւ, թէ Նորին Մեծութեան Թագուհու կառավարութիւնը սպասում է քննութեան հետևանքին և թէ ինքը յարմար չէ դատում ներկայ րոպէիս տեսակցութիւն ունենալ պատգամաւորութեան հետ յիշեալ հարցի առթիւ։ Սակայն Լօրդ Կիմբերլէյը փափագում է, որ պատգամաւորութեան կողմի մատուցուելու որոշումը առաքուի իրեն, որպէս զի կարողանայ կարդալ իւր պաշտօնակիցներին։ Վճռեցին հետևեալը. «Դիսիդէնտ քահանաների երեք ճիւղերի միացեալ ընկերութիւնը յայտնում է իւր ուժգին զայրոյթը թիւրք կառավարութեան աստիճանաւորների կողմից, դաշինքների հակառակ, քրիստոնեաների դէմ գործուող յարատև բարբարոսութեանց առթիւ, որոնք գնալով գնալով վերջին կոտորածները յառաջ բերին։ Մենք շնորհակալ ենք, որ մեր կառավարութիւնը քայլեր է անում այդ չարիքների առաջն առնելու համար։ Մենք չենք ընդունում հարստահարիչ թիւրք պաշտօնեաներից կազմուած որ և է քննիչ կօմմիսիան, այլ պահանջում ենք անկողմնակալ անձանց արդար քննութիւն և մի այնպիսի քայլ, որ ազատէր հաւատի համար բանտարկուած հայերին։ Պահանջում ենք նաև միջոցներ գործ դնել Տաճկաստանի հայերին անգութ կեղեքումներից պաշտպանելու համար։ Այս պահանջներն անում ենք յանուն ընդհանուր մարդասիրութեան և Բեռլինի ու Կիպրոսի դաշանց թելադրութեամբ»։

ԱՐԺԱՆ ՄԿՐՏԻՉ ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻՆ

Ամսոյս 19-ին, կիւրակի, Վանքի մայր եկեղեցու բակում կատարուեցաւ հոգեհանգիստ ազգիս նշանաւոր բարեգործ հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանի գերեզմանի վրայ, նորակառոյց արձանի կանգնման առթիւ։ Պատարագիչ էր Նորին Օծութեան Վեհափառ Հայրապետի քարտուղար բարեշնորհ Յուսիկ աբեղան։ Ս. պատարագի ժամանակ Աւետարանի ընթերցումից առաջ Նորին Վեհափառութիւնը բարձրանալով բեմ, մի հիանալի ատենաբանութիւն արեց, որի ճշգրիտ նկարագրութիւնը՝ իւր ընտիր ոճով ու գոյներով, մեր կարողութիւնից վեր լինելով հանդերձ, պարտք ենք համարում հաղորդել նորա համառօտ բովանդակութիւնը։ Նորին Օծութիւնն ասաց. Երջանկայիշատակ Ղափանցու ասածն է, թէ քարոզի ու խօսքի կարճն է անոյշ, ուստի և իւր ատենաբանութիւնն էլ կարճ կը լինի. ապա յայտնեց, որ խօսելիքն է ազգիս նշանաւոր բարեգործ Մկրտիչ Սանասարեանի մասին, որի հոգեհանգիստը պիտի կատարուի պատարագից յետոյ, նորա գերեզմանի վերայ կանգնած արձանի առթիւ, որ իրաւամբ կրում է իւր վերայ Խորենացու խօսքը ս. Սահակ Պարթևի մասին, թէ «մահկանացու ծնեալ, անմահ արար զիւր յիշատակ»։ Նորին Օծութիւնը բարեգործութեան նշանակութիւնը պարզելու համար ասաց. Ամեն տէրութեան հպատակ միւս տէրութեան սահմանը անցնելու համար ստանում է իւր իշխանութիւնից անցաթուղթ, որ վկայում է, թէ նա հաւատարիմ հպատակ է և ոչ փախստական կամ կասկածաւոր անձն. այսպէս էլ Աստուծոյ արքայութիւնը գնացողներն իրանց երկրաւոր կեանքից յետ պիտի ունենան իրանց անցաթուղթը, բայց սա տէրութիւնից կամ երկրաւոր որևէ իշխանութիւնից ստացած անցաթուղթ չէ, ոչ. երկնից արքայութիւն մտնելու անցաթուղթն ամեն մարդ ինքն իրեն պիտի պատրաստէ, այդ անցաթուղթը իւրաքանչիւր մարդ ինքն իրեն է տալիս, իւր գործերով. այդ անցաթուղթը ժողովուրդը, եկեղեցին է տալիս։ Այդպիսի անցաթուղթ ազգի ու եկեղեցու համար նահատակուողներն են ստանում, առաքինի անձինք են ստանում, այդպիսի անցաթուղթ ազգի բարերարներն են ձեռք բերում, իրանց բարի գործերով յօգուտ հասարակութեան։ Բարեգործութիւններն էլ տեսակ տեսակ են լինում. օրինակի համար տաճիկների մէջ մեծ բարեգործութիւն համարվում է կամուրջ շինելը. կամուրջ կանգնելն էլ վատ չէ, որպէս զի մարդիկ կարող լինին գետերի վրայով առանց խեղդուելու վտանգին ենթարկուելու անցնել, բայց ամենամեծ բարերարութիւնը կրթական հաստատութիւն կանգնելն է, որովհետև կրթութիւնը լողալ ուսուցանելով առանց կամրջի էլ գետն անցնելու միջոց է տալիս։ Բայց աշխարհումս միայն ջրային գետեր չկան. որքան տեսակ մտաւոր և բարոյական հեղեղներ կան երկրիս վերայ, որոց ամենքի վրայով առանց վտանգի անցնել ուսուցանողը կրթութիւնն է։ Ի Տէր հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանը ահա այդ կրթական ասպարէզն է ընտրել իւր բարեգործութեանց համար։

Նա նախապէս պատրաստելով իւր այն նպատակի համար ընտիր մշակներ, կանգնեց Բարձր Հայոց Կարին քաղաքում Սանասարեան հոյակապ դպրոցը հայ տղայոց համար, դպրոց, որ իւր տեսակի մէջ եւրոպացոց բարեկարգ և արդիւնաւոր դպրոցների պատկերն է կրում և որ տեղական իշխանութեանց հովանաւորութիւնն ու համակրութիւնն է վայելում։ Նոյն բարեգործ Սանասարեանը, գոլով Վանեցի ըստ նախնեաց, որոնց տունը ցայժմ էլ կայ Վանում 200 քայլ հեռու Խրիմեանների տնից, ապահովեց դրամագլխով և Վանայ սուրբ Սանդխտեան դպրոցը հայ աղջկանց համար, հասկանալով, որ ազգի երջանկութեան համար անհրաժեշտ են և՛ կրթեալ մայրեր։ Այսպէս հանգուցեալ Մկրտիչ Սանասարեանը թէ հայ աղջկանց և թէ հայ տղայոց կրթական հաստատութիւններ կանգնելով ու ապահովելով իրաւամբ կրում է իւր շիրմի վերայ. «մահկանացու ծնեալ, անմահ արար զիւր յիշատակ» խօսքերը։ Ապա Նորին Օծութիւնը մի տեսակ յանդիմանութիւն արաւ հայ հասարակութեան, ասելով, այսպիսի բարերարաց շիրիմը նոցա սանոները և հայ ժողովուրդը պիտի կանգնէր և ոչ կտակակատարները. բայց այս էլ մեր մեղքն է, մեր անտարբերութիւնն է որից գէթ այսուհետև Աստուած հեռու պահէ հայ ազգը։

Ապա Նորին Օծութիւնն աղօթեց Աստուծուն, որ Իւր հոգւոյ շնորհքը գեղանի ազգի վերայ, որ այսպիսի բարեգործներ շատ ծնանէ, իւր երջանկութեան և բարօրութեան համար։ Վեհափառը վերջացրեց Իւր քարոզը խնդրելով, որ աղօթեն Աստուծուն Իրան առողջութիւն պարգևելու, որ կարող լինի Իւր ճանապարհը շարունակել և Իւր պարտքերն առ ս. եկեղեցին և ազգը լցուցանել։

Ս. պատարագից յետոյ Նորին Օծութիւնը, ուղեկցութեամբ տեղւոյս առաջնորդ գեր. Գէորգ արք-եպիսկոպոսի, Անանիա եպիսկոպոսի, բազմաթիւ վարդապետների ու քահանաների դուրս եկաւ եկեղեցուց և հանգուցեալ Սանասարեանի շիրմի առաջ հանդիսադիր եղաւ հոգեհանգստեան կարգին, որ ինքը կնքեց պահպանիչով։ Թէ եկեղեցին, թէ եկեղեցու բակը լիքն էր խուռն բազմութեամբ։

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ և Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ

«Ռուսսկիյա Վեդոմոստի» № 26 ի մէջ կարդում ենք հետևեալ թղթակցութիւնը Կ. Պօլսից, յունվարի 16-ից։

«Բիթլիսի վալիի (ընդհանուր նահանգապետ) պաշտօնից հեռացնելն այն առաջին լուրջ միջոցն է, որ Բ. Դուռը ձեռք առաւ հայկական խնդրի միջազգային քննիչ յանձնաժողովի պահանջմամբ։ Բայց այդ միայն գործի սկիզբն է, իսկ նրա առապայ զարգացումն և վախճանը առ այժմ անյայտութեան մէջ է։ Կարելի է միայն մի բան ասել, որ տաճկական քաղաքականութեան այն խորամանկութիւնը, որով նա հաւաքիտ ճարպկութեամբ օգուտ էր քաղում մեծ պետութիւնների դէպի միմեանց ունեցած փոխադարձ անվստահութիւնից և նրանց այն ձգտումից, որ աշխատում էին պահպանել quand-même խաղաղութիւն հայկական հարցից ուշադրութիւն փախցնելու համար այդ—խորամանկ հաշիւները այս անգամ սխալ դուրս եկան։

Երբ աշնանը սկսեցին խուլ լուրեր լսուել քրդերի և թուրքերի Սասունի գաւառում կատարած գազանութիւնների մասին, Բ. Դուռը նրանց վրայ ուշադրութիւն չդարձրեց։ Բայց երբ եւրոպական լրագրներում սկսեցին երևան գալ Վանի ավիրում, օգոստոսի սկզբներում, պատահած դէպքերի մասին առաջին ճիշդ տեղեկութիւնը և եւրոպական հասարակական կարծիքը չկարողացաւ զսպել իրեն և ակամայ կարեկցութեան զգացմունք արտայայտեց ճնշուած հայերին, այդ ժամանակ Բ. Դուռը հարկաւոր համարեց ընդհատել իւր լռութիւնը, յայտարարելով թէ՝ ոչ թէ քրդերն են հայերին կոտորում, այլ հայերն են քրդերին կողոպտում և կոտորում։

Այդ անսպասելի յայտարարութեան արած տպաւորութիւնը շատ աննպաստ եղաւ նոյն իսկ Բ. Դռան համար և նա ստիպուած եղաւ գործել գոնէ ձևի համար, ի ցոյց։ Նշանակուեց քննիչ յանձնաժողով, հրաւիրուեցին պետութեանց ներկայացուցիչներ։ Բ. Դուռը հաւատացած էր որ հայկական սարահարթի անանցանելի ձիւնը տաճկական բիւրոկրատիայի փորձուած ճարպկութեան հետ, որ միշտ կարողանում է սառուց կտրեցնել, խեղդել ամենաջերմ հարցերը, կարող են սառեցնել Եւրոպայի ուշադրութիւնը դէպի հայկական հարցը։ Բայց առ այժմ այդ յոյսերը դժուար են արդարանում և գուցէ քննիչ յանձնաժողովը կարողանայ բանալ տաճկական ռէժիմի պատահական և կրկնուող պակասութիւնները։

Տաճկաստանի հայ բնակիչների դրութեան պարզելու նոր և կարևոր գործօններից մէկն այն հանգամանքն է որ 1894 թուին պատրիարքական գահը բազմեց մի հաւաքգիտ և եռանդուն անձն՝ Մատթէոս եպ. Իզմիրլեան։ Նրա նախորդը, թոյլ բնաւորութիւն ունեցող Աշըգեանը Բ. Դռան հլու ծառան էր. իսկ Բ. Դուռը իրեն ստորադրեալ և պետական կապալառու հայ փաշաների միջոցով իր ձեռքի մէջ էր պահում, երկչոտ ու աչքը վախեցած պատրիարքին։ Թէ մինչև որտեղ էր հասնում Աշըգեանի հնազանդութիւնը, որ հաւատում էր թէ կարելի է իր հօտի դրութիւնը բարւոքել տալ թուրքերի հաճոյքը շարունակ կատարելով, այդ կարելի է դատել հետևեալ հանգամանքից։ Նա մինչև իր պատրիարքութեան վերջը չհամարձակուեց եկեղեցիներում կարդալ հայոց նոր՝ այնքան մեծ ժողովրդականութիւն ունեցող կաթողիկոսի՝ Մկրտիչ Առաջնոյ անդրանիկ կոնդակը։

Իզմիրլեան Պատրիարքը իւր պաշտօնն ստանձնած առաջին օրից իրեն բոլորովին ուրիշ դիրք տուաւ։ Իր սկզբնական ճառի մէջ նա բացարձակ յայտնեց թէ մտադիր է հաստատ պահպանել ժողովրդի իրաւունքները և նրա տեղ բողոքել այնպիսի վճռականութեամբ, որ նրան տալիս է դատի արդարութիւնը և հայերի կրած թշուառութեանց բացառիկ ծանրութեան չափը։ Այսպիսի մի արտասովոր ճառը, որ հայ պատրիարքի բերնից լսելու սովոր չէին՝ այստեղ սաստիկ տպաւորութիւն գործեց և մի քանի դեսպաններ խնդրեցին հասցնել իրենց այդ ճառի պատճէնը։

Նոյն հաստատամտութեամբ աչքի էր ընկնում և այն ճառը, որ արտասանեց պատրիարքը սուլթանի առաջ հանդիսաւոր ընդունելութեան ժամանակ։ Սուլթանը նշանաւոր Ներսէս պատրիարքի մահից յետոյ առաջին անգամն էր տեսնում մի հաստատամիտ պաշտպան իր հօտին, որ այդ հօտի համար յարգանօք բայց խիստ խօսքերով միջնորդում էր իրաւունք և արդարութիւն։

Այդպիսի մի վարմունքի համար առաջուայ ժամանակներում Պատրիարքն անմիջապէս կ'աքսորուէր մի որ և է խուլ վանք, բայց այժմ, ժամանակակից տրամադրութեան շնորհիւ Պատրիարքը մնաց ողջ և անվնաս։

Դժուար է, 'ի հարկէ, գուշակել թէ հայկական հարցը հետզհետէ ո՞րչափ կը զարգանայ, բայց եթէ պետութեանց մէջ եղած համաձայնութիւնը, տաճկական դիպլոմատիայի որ և է ճարպիկ ընթացքով չխանգարուի, այն ժամանակ գուցէ հնար լինի կայացնել այնպիսի մի վճիռ, որ գոհութիւն տայ մարդասիրութեան պահանջներին և խաղաղասիրութեան շահերին, որոնց համար չափազանց ցանկալի է որ մէջտեղից հեռացնուի խաղաղութեան համար այդ վտանգաւոր և շարունակ վերանորոգուող վէրքը»։

ՄԻ ՆՈՐ ՀԱՄԱԿՐԵԼԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆ

Հարցաքննութիւնը միշտ մի չարիք է եղել մանկավարժական աշխարհում։ «Կտրուած» աշակերտի արտասուքն ամենադառն արտասուքն է, և այն փայլուն յոյսերը, որոնք փշրվում են մի պատահական թուանշանի—միաւորի կամ 2-ի առաջ, այդ յոյսերը վերանորոգելու և կազդուրելու համար նոյնքան նոր միջոց է հարկաւոր, որքան մի աշակերտ կորցնում է որոշ ծրագրուած դասընթաց անցնելու համար։ Եւ այդ զգալի է թէ այն մատաղահասակ փոքրիկ աշակերտի համար, որ առաջին անգամն է ոտը դնում դպրոցի շէնքը և թէ այն պատանիների համար, որոնք պատրաստվում են իրենց վերջին ողջոյնը տալ դպրոցին և դիմել բարձրագոյն կրթութեան։

Մի տարօրինակ նախապաշարմունքով՝ երկար տարիների ընթացքում հարցաքննութիւնը համարվում էր մանկավարժական անհրաժեշտ միջոցներից մինը, որի ճշտութեան հաւատ էին ընծայում ինչպէս մաթեմաթիքական ճշմարտութեան։

Տասնեակ տարիներ տքնող աշակերտի երկարամեայ աշխատանքը գրաւ էր դնվում մի րոպէի, որ երկսայրի սրի պէս կարող էր այս կողմ և այն կողմ կտրել նրա վիճակը։ Չէնց այդ րոպէի ծանրութիւնը և նրա պատճառած հոգեկան վրդովմունքը կարող է ամենաընդունակ աշակերտին այնպիսի դրութեան մէջ դնել, որ նա չկարողանայ և ոչ մի յաջող պատասխան տալ և ոչ մի յաջող շարադրութիւն ներկայացնել։ Եղել են ժամանակներ և կան իսկ, որ հարցաքննութիւնները կատարեալ ինկվիզիցիական կերպարանք են ստանում և շատերն ականատես կը լինին եղած այնպիսի տեսարանների, ուր աշակերտը կատարելապէս գլուխը կորցնում է իր վրայ զանազան կողմերից թափուող հարցումների տակ, որոնց յաջող կամ անյաջող պատասխանելն իսկապէս չէ կարող

ապացոյց լինել աշակերտի զարգացման կամ տհասութեան։

Դեռ այդ չարիքի բացասական կողմն է, երբ աշակերտն ինքը ըզգում է քննութեան ծանրութիւնը. իսկ եթէ նա ինքը տոգորուած է այդ հարցաքննութեան սիրով, եթէ նա գիշեր ու ցերեկ թութակի պէս բերան է անում դասերը, կամ գրքերից ցիտատներ է արտագրում հարցաքննական բերանացի և գրաւոր պատասխանների համար, այն ժամանակ չարիքն աւելի մեծանում է, մշակելով աշակերտի մէջ ցուցամոլութեան և կեղծիքի զգացումն և նրա մէջ մեռցնում է իսկական սէրը դէպի ուսումն և գիտութիւն։ Պարզ է, որ այդպիսի դէպքերում աշակերտը դառնում է մեքենայ, նայում է իւր պարտաւորութիւնների վրայ իբրև մի պաշտօնեայ։ Հետևանքը պարզ է։

Այդ պատճառով թէ ծնողը, թէ հասարակութիւնը և թէ մանկավարժութեան իսկական շահերը գնահատող դաստիարակները չեն կարող չգնահատել ամեն մի նոր բարեփոխութիւն, որ կատարվում է հարցաքննութիւնների վերաբերմամբ։ Այդ տեսակէտն է ժողովրդական լուսաւորութեան այն նոր բարեփոխութիւնը, որ գտնում ենք Օդեսայի ուսումնական շրջանի դպրոցական իշխանութեան շրջաբերականի մէջ։ Այդ շրջաբերականը միայն տեօրիայի հետևանք չէ, այլ հիմնուած է երկարամեայ փորձերի վրայ և ցանկանում է մանկավարժական աշխարհից հետզհետէ հեռացնել նրան տիրող ամենամեծ չարիքներից մէկը, որ աւանդաբար անհրաժեշտ էր համարվում, բայց որ միևնոյն ժամանակ ցոյց տուեց իւր բոլոր վնասակարութիւնը։

Այդ շրջաբերականով եթէ ոչ բոլորովին գոնէ մեծ չափով թեթևանում է բարձրագոյն կրթութեան պատրաստուող երիտասարդ պատանիների դրութիւնը, որոնց հնար է տրվում իրենց գիտութեան չափն արտայայտել, իրենց պատրաստութիւնն ապացուցանել ոչ միայն ընդունուած սովորական մի չափով—գրաւոր աշխատութեամբ, այլ թէ գրաւոր թէ բանաւոր պատասխաններով, որոնց բազմատեսակութեան մէջ մանկավարժական ժողովը կարող է աւելի պարզ որոշել այս կամ այն աշակերտի զարգացման և գիտութեան չափը։ Միևնոյն ժամանակ ուրախալի է նկատել, որ այդ շրջաբերականներով ոչնչացնվում է ինքն ըստ ինքեան անմիտ թուանշանների ճակատագրային ազդեցութիւնը և որ այսուհետև աշակերտի վիճակը չէ կարող կախուած լինել մի պատահական միաւորից կամ երկուսից, որոնք աշակերտի սիրտը և միտքը ճնշում են մի կողմից և միւս կողմից ուսուցչի մանկավարժական գործունէութիւնը ջլատում են. որովհետև ուսուցչի պարտաւորութիւնը չէ միաւոր և երկու դնելով բաւականալ, ոչ միաւորը և ոչ երկուն առիթ չեն կարող տալ աշակերտին աւելի ուշադրութիւն դարձնելու իւր ուսման առարկաներին, այլ այդ առիթը կը տան նրան ուսուցչի գիտողական և հոգեբանական ոյժը, նրա անձանձիր աշխատանքը և նրա անկեղծ ցանկութիւնը գիտութիւն սովորեցնել իւր աշակերտին։

Նոր բարեփոխութիւնը ճշմարիտ է նեղ սահմաններով է գծագրուած, բայց նա գրաւական է, որ այդ ուղղութիւնը կը սկսի տիրապետել դպրոցական կեանքում և կը թելադրէ շատ չարիքներ դուրս վռնդել այդ կեանքից, պատուաստելով նրան եւրոպական առողջ և խելացի մանկավարժական սկզբունքներ։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԼՕՆԴՕՆԻՑ հեռագրում են «Նով. Վրեմ». «Կիսապաշտօնական թերթերը հաղորդում են, որ Գուրգում, Անգօրիայի գաւառում նոր անգթութիւններ են տեղի ունեցել հայերի դէմ։

Անգլօ-հայկական շրջաններում ենթադրում են որ տաճիկ կառավարութիւնը մեծ գումարներ տալով ճանապարհորդ Խիմէնեսին ուղարկել էր նրան Լօնդօն հայ ազգասէրներին կաշառելու համար։ Խիմէնեսի անյաջողութիւնը ամրացրեց Բուստէնիի դրութիւնը։

Յունուարի 23-ին կայացաւ Անգլօ-հայկական ընկերութեան նիստը, որին մասնակցում էին պարլամենտի մի քանի անդամներ թէ պահպանողականներից ու թէ ազատամիտներից, նախագահում էր Ստեվենսոն։ Առաջարկուեց որ նախարարութիւնը քննի Հայաստանում մտցնելիք րէֆօրմների ծրագիրը։

* * *

Կ. ՊՕԼՍԻՑ «Բէչտերի գործակալութիւնը» հեռագրում է յունվարի 27-ից.—«Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչները բողոքել են Բ. Դրան, թէ Մուշի նահանգի տաճիկ կառավարիչները դժուարացնում են քննութիւն կատարելը Սասունի գործերի վերաբերմամբ։

* * *

Իտալական տէրութիւնը նորերումս կարնում հիւպատոսարան է հաստատել։

Նոր հիւպատոսի իրաւասութեան կը վերաբերին Էրզրումի, Բիթլիսի, Սեվասի և Վանի վիլայէթները, որոնք մինչև օրս կախումն ունէին Տրապիզոնի հիւպատոսարանից։

* * *

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՈՒՂԵՐՁ ՍՈՒԼԹԱՆԻՆ

—

Խտիրնէի Հայոց առաջնորդ Մեսրոպ Եպս. և նոյն քաղաքի մի քանի անձինք մատուցել են Խտիրնէի կուսակալութեան միջոցաւ սուլթանին հետևեալ ուղերձը՝ անմահացնելով իրենց անունը ստրկութեան պատմութեան մէջ.

«Բարձեալն Աստուած, որչափ որ աշխարհս գոյութիւն ունենայ, ամենայն փառօք պահպանէ՛ ու անսասան պահէ Վեհ. Սուլթանն, որ իբրև աշխարհի կարգապահութեան միակ կապն և հանրութեան անդորրութեանը պահպանման համար ստեղծուած է։

«Ժամանակէ մը ի վեր, մեծ վշտով կը լսուի լրագիրներէն թէ Անատօլուի և կայսերական կուսակալութեանց մէկ քանիին մէջ, հայ հասարակութենէն կարգ մը մարդիկ, որոնք ինքզինքին չեն գիտեր և իրենց հասարակութեան օրինաւոր ու ճշմարիտ շահերը չեն հասկնար, կը համարձակին չվայլող ընթացք մը բռնել։

«Հայ հաւատարիմ ժողովուրդը 500 տարիէ ի վեր պահպանած է Վեհափ. Սուլթանին փառասանձ նախնիքներուն թևին տակ իրենց կրօնքը, լեզուն և ազգութիւնը և ասոր հետ նաև ունեցած են հանգիստ և երջանիկ վիճակ մը։ Այս վիճակին համար շնորհակալութիւն յայտնելը կը նկատենք մեր առ Օսմանեան կառավարութիւնն ունեցած հաւատարմութեան սրբազան պարտքերէն մին և ասոր փոխարէն արժանանալ մշտակենցաղ Օսմ. պետութեան պաշտպանութեան և վստահութեան։ Նա մանաւանդ Վեհ. Սուլթանին այս արդարութեան դարուն մէջ արտագրուած այնքան օգտակար և գեղեցիկ գործերը, որոնք գահակալութեան օրէն ի վեր առանց բացառութեան բոլոր Օսմանեան հպատակներուն նիւթական և բարոյական կեանք մը պարգևած են, հայ հպատակ ժողովրդին ալ անոնցմէ օգտուած ըլլալուն, տարակոյս չի կայ որ վերոյիշեալ անձերուն բռնած ընթացքը իրենցմէ ի զատ և ոչ մէկու մը հաւատարմութեան զգացումներուն չպիտի կրնայ վնասել։ Ամեն պարագայի և ամեն տեղ ձենք կարօտ ըլլալով Վեհափառ Սուլթանին, կը սպասենք որ Իր գթառատ ակնարկը չի հեռացնէ հայ հպատակ ազգին վրայէն.»

312 Բէճիպ 20
310 Քեանունը Սանի 4

Et c'est tout ?

Խտիրնէի Հայոց Առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոս, Աւագերէց Մկրտիչ, Արշ. քահանայ, Արիստակէս քահանայ, Խոռէն քահանայ, Մարկոս քահանայ, Սրիստակէս քահանայ, Մկրտիչ Քեաթիպեան, Ալիքսան Քիւչիւքեան, Յովսէփ Սանտալճեան, Սուքիաս Եաղուպեան, Ստեփան Թամէրսեան, Սահակ Պարոնեան, Տիգրան Քիւչիւկեան, Պօղոս Կարապետեան, Աբրահամ Բաբագեան, Կարապետ Բորթուգալեան, Պօղոս Կարապետեան, Արթին Ունճեան, Գէորգ Փափազեան, Արթին Նազարեան, Կարապետ Մուրլեան, Մկրտիչ Աղասեան, Գէորգ Աղասեան, Յովհաննէս Խամերեան, Ստեփան Եազըճեան, Մարկոս Սարկաւագեան, Միքայէլ Թուրշուճեան, Շնորհք Փափազեան, Թագւոր Գոյումճեան, Ռուբէն Փանոսեան, Արթին Կարապետեան, Սերգիս Կարապետեան, Գրիգոր Զագրեան, Նշան Սարկաւագեան։

Ընդամենը 36 անձինքի (excusez du peu!), որոնցից 7-ը, այն է՝ 20% հոգևորականներ են. իսկ 29 աշխարհականներից երկու Ադասեան կայ, երկու Սարկաւագեան, երեք Կարապետեան, երեք Փափազեան։

* * *

«Բէչտերի գործակալութիւնը» հեռագրում է եւրոպական թերթերին.

«Անտեղի պաշտօնապէս հերքվում է Լօնդօնում հրատարակուած այն լուրը, թէ մի թուրքաց զինուորական գունդ պղծել է Տարօնի հայոց գերեզմանատունը։ Վերջման մէջ ասուած է, որ այդ լուրը յառաջ է եկել երևի թէ այն հանգամանքից, որ նորերս պաշտօնորդ զինուորներ էին կարգուած մի կիսաւեր գերեզմանի մօտ, ուր, ոմանց ասելով, թաղուած պիտի լինի Սարդանապալ թագաւորը»։

* * *

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են թէ ռուսաց արտաքին գործոց նախարարի թեկնածուների թւում անուանում են Ստալին, Լօբանով-Ռօստովսկուն և Կ. Պոլսոյ դեսպան պ. Նելիդովին։

* * *

ԴԸՐՍԻ զինուորական նահանգապետը անցեալ տարուան յունիս ամսին ներկայացրել է երկրիս բարձրագոյն իշխանութեան իր նահանգի 18 գիւղերի ցուցակը, միջնորդելով որ այդ գիւղերում ռուսաց տարրական դպրոցներ բացուին գանձարանի հաշուով։ Այդ միջնորդութիւնը յաջողութեամբ է պսակուել և ելևմտից նախարար պ. Վիտտէ համաձայնուել է որ պետական գանձարանից՝ յատկացնուի ենն դպրոցների համար պէտք եղած գումարը։ Այդ դպրոցները պիտի բացուին 1895, 1896 և 1897 թուականների ընթացքում, իսկ նրանց շինութիւնների համար այժմէնից արդէն յատկացրած է 35,000 ռուբլի։ Տեղական իշխանութիւնը, ինչպէս հաղորդում է «Կարս» լրագիրը, վճռել է այդ դպրոցները բանալ հետևեալ գիւղերում.—Միլիայլովսկա և Սալուտ Արդահանի գաւառում, Սարիղամիշ և Բեօլիւքբաշ Սօղանլուի գաւառում, Գըզըլ Չախչախ - Չորագեալի գաւառում, Բարդուս—Օլթիի գաւառում, Գարաուրղան, Դիգօր և Բենկլի-Ահմատ գիւղերում։ Առաջին վեց գիւղերի դպրոցների կառուցումը կըսկսուի այս տարի, իսկ մնացածները կը շինուեն 1897 թուին։

* * *

Յունվարի 31-ից պ. կառավարչապետի դիւանում կըսկսուեն Կովկասեան բոլոր նահանգապետների նիստերը նախագահութեամբ Կովկասեան կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Շերեմետևի։ Նիստերին կը մասնակցեն նաև Թիֆլիզի և Բագուի արքունական պալատների և Թիֆլիզի վերահսկիչ պալատի կառավարիչները։ Խորհուրդը կը քննի մահմեդականներից առնելիք զինուորական տուրքի մշտական դարձնելու խնդիրը։

* * *

Կովկասեան կառավարչապետի միջնորդութեամբ Բարձրագոյն հրամայուած է Կովկասում գտնուող պարսկահպատակների գործած յանցանքները դատել նոյն օրէնքներով, ինչ որ հրատարակուած է Կովկասեան բնիկների համար 1893 թուի սեպտեմբերի 13-ին, որով մի քանի չարագործութիւններ դատվում են զինուորական դատարանով։

* * *

Մի քանի տարի առաջ հանգուցեալ Յովհաննէս Յովնանեանի ժառանգներ ուղարկած էին Մարիամեան—Յովնանեան օրիորդաց ուսումնարանի հոգաբարձութեանը 2455 րուբլի ամենաչքաւոր աշակերտուհիներին կարևոր դէպքերում նպաստ տալու համար։ Այժմ լսում ենք, որ բժշկապետ Մ. Ղահ-Պարոնեանցը ներկայացրել է հոգաբարձական խորհրդին ժառանգների կողմից մի գրութիւն, որից երևում է թէ սոքա դարձեալ յատկացրել են միևնոյն նպատակով մի նոր աղբիւր, այն է տեղոյս Առևտրական բանկից նոցա իւրաքանչիւր տարի (սկսեալ 1893 թւականից) իբրև հիմնադիրների հասանելիք վարձատրութիւնը (учредительская премія), որի տարեկան քանակութիւնն է մերձաւորապէս 400-ից մինչև 500 ռուբլի։

Հոգաբարձական խորհուրդը որոշել է կազմել յիշեալ գումարներից մի անձեռնմխելի փոնդ և նրա տոկոսիքով ամեն տարուայ վերջը մեծ տօներին տաք հագուստ գնել և մատակարարել ուսումնարանի ամենաաղքատիկ սանուհիներին։ Սոյն որոշման համեմատ՝ 2455 ռուբլիի այժմեան մնացորդը (2220 ռ.) և 1893 թուականի համար ստացուած հիմնադիրների վարձատրութիւնը (436 ռ.) ընդամենը 2656 ռ. արդէն զետեղուած է իբրև աւանդ Տփխիսու Առևտրական բանկում։ Վերջին գումարը մինչև ապրիլի վերջը անշուշտ 3000 ռուբլիից կ'աւելանայ և շատ հաւանական է, որ այնուհետև պիտի աճէ շնորհիւ հանգուցեալ բարեգործի ժառանգների այն սիրոյն և եռանդին, որ տածում են նոքա դէպի իրենց անմոռանալի ծնողաց կառուցած ազգօգուտ մեծ դպրոցը։ Գովելի է ներկայ դէպքում և հոգաբարձութեան խոհեմ և նպատակայարմար կարգադրութիւնը։

* * *

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Պ. Խմբագիր.

Խնդրեմք հետևեալ ծանուցումը բարեհաճէք հրատարակել լրագրիդ մերձակայ համարներից մէկի մէջ 'ի միամտութիւն բարեպաշտ նուիրատուաց։

Անցեալ 1894 թուին յօգուտ Երուսաղէմայ Սուրբ Յակովբեանց Վանու հաւաքուած գումարը. որ անում է 2338 ռ. և Տփխիսի հայ Եկեղեցիներում շրջուող Երուսաղէմայ տուփերի 1893 թուի գումարը, որ անում է 153 ռ. 40 կ. ըստ հաւատարմագրութեան Երուսաղէմայ Ամենապատիւ Սրբազան Պատրիարքի, յանձնուեցաւ Պ. Կարապետ աղա Մութաֆեանին, հասուցանելու ըստ պատկանելոյն. և այս մասին ամենախոնարհաբար յայտնուեցաւ Ազգիս Վեհափառ Հայրապետին։

Գանձապետք Երուսաղէմայ Ս. Յակովբեանց Վանից՝

Արշէն քահանայ Բագրատունի.

[illegible]

31 յունվ. 1895 թ.

Թիֆլիզ։

* * *

ՎԵՐՋԻՆ ԴԻՄՈՒՄՆ ՆԱԽԿԻՆ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

(Նամակ Խմբագրութեան)

—

Ուսանողական պարտքերն ևս կարծէք սպառնում են մեր հասարակական փոքրագոյն չարիքներից մէկը դառնալ։ Մեր պարբերական թերթերին մշտական հետևողը վերջին ժամանակներս նկատած կը լինի, որ լրագիրներում հետզհետէ լոյս տեսան մի շարք նամակներ Ռուսաստանի զանազան քաղաքների ուսանողներից - դրանք խնդրում էին նախկին ուսանող ընկերներին վերադարձնել այն գումարները, որ ուսանողութեան տարիներում վերցրել էին իրենցից։ Կրկնուեցան այդ նամակները, նորից և նորից խնդրեցին, սպառնացին աւելի խիստ միջոցների դիմել, նոյն իսկ լրագրները առաջնորդող յօդուածներ նուիրեցին այդ նիւթին, բայց ինչ հետևանք ունեցան այդ բոլորը. համարեա ոչինչ—«ձայն բարբառոյ յանապատի» . . .

Մոռանալ կարօտող ընկերին, մոռանալ այն տարիները, երբ նրա աղքատիկ գրպանի կոպէկները բաւականութիւն են տուել ընկերի անհրաժեշտ կարիքներին, և՛ մոռանալ այնպիսի մի ժամանակ, երբ նախկին սուղ ու ճնշուած վիճակին փոխարինել է առնուազն օրինաւոր ու ազատ կեանք, նախկին 20—30 ռուբլի ամսականներին, կանոնաւոր ապրուստի ռոճիկ—դա աւելի քան տգեղ ու պախարակելի է։ Ինչին վերագրել այդ երևոյթը, սոսկ մոռացութեան, անհոգութեան թէ . . . ամենատարրական ըզգացմունքի բացակայութեան . . .

Մատնանշելով խօսքը Պետերբուրգի հայ ուսանողների վրայ, պէտք է ասել, որ այս տարի առաջին անգամն է, ինչ նրանք դիմում են նամակներով իրենց նախկին ընկերներին ուսանողական պարտքերի մասին։ Բայց դիմել նամակով բոլորին՝ գոնէ առ այժմ անհնար է, որովհետև կայ մի ահագին թիւ այնպիսիների, որոնց ոչ միայն հասցէները յայտնի չեն այլ անյայտ են նոյն իսկ անունները։ Ուստի և ներկայ նամակի

ՖԵԼԻԵՏՕՆ

ԴԷՊԻ ԱՆՑԱԾ ԴՆԱՑԱԾ ՕՐԵՐԸ

—

Մարդու որդին մատնուելու է, բայց վա՜յ նրան, որի ձեռքով կը մատնուի։

Թափուր էր Բագրատունեաց գահը. Յովհաննէս թագաւորը մեռել էր՝ յունաց արքունիքում մի յիշատակ թողնելով։ Դա մի թուղթ էր, որով Հայոց թուլամորթ արքան Անին յոյներին էր տալիս, խնդրելով իրեն հանգիստ թողնել մինչև մահը։

Սև՜ յիշատակ։

Յոյնն իւր ձեռքի փաստագրի զօրութեամբ Անին և շրջակայքն էր պահանջում. թաթարաց հրոսակները անցնում էին հայկական գաւառները և ամեն տեղ իրենց ետևում աւեր և ամայութիւն էին թողնում. երկրաշարժ, կարկուտ, մահտարաժամ ժողովրդին վերջին յուսահատութեան էին հասցնում։

Մարդկային գազանութիւնից և բնութեան տարրերի կատաղութիւնից ինչ էլ որ մնում էր, այն էլ ընտանի թշնամին՝ ներքին երկպառակութիւնն էր մաշում։

Ընտանի՜ թշնամի, հեշտ է ասել, բայց այդ էր աւելի սարսափելին, այդ էր, որ պետական թուլացած մարմնի վերջին զօրութիւններն սպառում էր։

Յովհաննէսը անորդի մեռաւ. Բագրատունեան գահի օրինական ժառանգը մեռած թագաւորի եղբօրորդին էր՝ պատանի Գագիկը։ Բայց դա փախստեայ՝ թագստեան մէջ էր անցնում իւր օրերը. և գահը երկու տարի այրի մնաց։ Փախստեայ և թագստեան մէջ, ոչ արտաքին, այլ ներքին, այլ ընտանի թշնամիների երեսից։

Եւ այդ ընտանի թշնամիների մէջ առաջին տեղը բռնում էր Վեստ Սարգիսը՝ Սիւնեաց ցեղից։ Խելքի և կամքի տէր մարդ էր Սարգիսը. բայց այդ խելքը, այդ կամքը ենթարկուած էին անարգ ես-ի հրամաններին։ Երկրի անտէրութիւնը, հայրենիքի աւերն ու կոտորածը, հայաստան ժողովրդի թշուառութիւնը չէին շարժում նրա գութը։ Նա ձգտում էր գահի վրայ ինքը բազմել. նա տենչում էր՝ իւր գլուխը թագով պսակել։ Սիրտը իւր բոլոր խորշերով, հոգին իւր ամբողջ էութեամբ փառասիրութեան կրքովն էր լցուած. այնտեղ հայրենիքի սիրոյ համար ոչ մի անկիւն չէր մնում։ Իւր փայփայած փառքի բարձրութեանը հասնելու համար նա պատրաստ էր զոհ բերել հայրենիքի բոլոր սրբութիւնները. եթէ հնար լինէր, նա հայութեան դիակը պատուանդան կը շինէր և այդպէս անգամ գահը կը բարձրանար։ Սարգսին հրապուրում էին արտաքին փայլը, տիտղոսը. ոչ արքայական գահը պատող փշերը, ոչ թագաւորի պարտականութիւնները նրա ուշադրութիւնը չէին գրաւում։ Այդ է պատճառը, որ Սարգիսը պատրաստ էր նոյն իսկ գահի իրաւունքները վաճառելով՝ գահ բարձրանալ։

Տեսնելով, որ իւր կուսակից հայ իշխաններով անկարող կը լինի իւր նպատակին հասնել, ըստ որում հայրենիքի շահերին հաւատարիմ մնացող իշխաններն այդ թոյլ չէին տալ, նա գաղտնի կերպով յոյներին է դիմում և նրանց գրգռում է հայերի և հայոց մայրաքաղաքի դէմ։

Յունաց Միքայէլ կայսրը մի քանի անգամ հայերին էր դիմել և Անին պահանջել։ Տեսնելով՝ որ հայերը յօժարակամ Անին չեն տալու և խրախուսուած Վեստ Սարգսի խորհուրդներից, նա մեծ զօրք է պատրաստում և հայաստան ուղարկում։ Սարգիսը նրանց առաջն է դուրս գալիս և ամեն բանի մէջ նրանց օգնում է իւր խորհուրդներով և միջոցներով։ Այդ բոլորը նա գաղտնի է կատարում։ Թէև թշնամի բանակի ձեռքին նա իբր անարգ գործիք է ծառայում, բայց և այնպէս նա աշխատում է հայերի աչքում հայրենասէր երևալ։ Դաւաճանը իւր ստոր նպատակներին հասնելու համար որքան մատնում, կործանում է, նոյնքան և աւելի քան նոյնքան հայրենիքի սիրոյ անունովն է երդւում։

Յունաց զօրքը մտնում է Շիրակ և պաշարում է Անի քաղաքը. մայրաքաղաքի ժողովուրդը զայրանում, արդար բարկութեամբ լցւում է. նա դիմում է ծերունազարդ Վահրամ Պահլաւունի սպարապետին և աղաչում է՝ իրան դէպի պատերազմ առաջնորդել։—Ամենքս, ասում են, պատրաստ ենք մեռնելու. բայց չենք մեռնի, մինչև մեր թշնամիներին չկոտորենք»։ Վահրամը զայրացած ժողովրդի գլուխն անցաւ, յանկարծակի յունաց զօրքի վրայ յարձակուեցաւ և ցրեց նրանց։ Մեծ էր կոտորածը, յոյներից քչերը կարողացան իրանց աշխարհը փախչել։

Ցնծութեան տօն է կատարում Անին. այդտեղ է գալիս և Վեստ Սարգիսը։ Խորամանկ աղուէս նա միամիտ է ձևանում, ցոյց է տալիս, թէ ոչինչ չգիտէ, թէ անծանօթ է կատարուած դէպքերին, ինքն էլ մասնակցում է հայրենիքի տօնական ուրախութիւններին։ Բերանը ժողովրդի հետ ուրախութիւն է երգում, իսկ գլուխը նորանոր չարութիւններ է մտածում։ Դարձեալ գրում, գրգռում է յոյներին Անու վրայ արշաւել, որ սակայն շուտով չի յաջողւում, ըստ որում յունաց արքունիքում խռովութիւններ կային։

Բայց Սարգսի հոգին ծարաւ է փայլի և փառքի. նա մտածում էր՝ յոյների ձեռքով հայոց ոյժը խորտակել, որ հայրենիքի շահերին հաւատարիմ իշխաններն ասպարիզից հեռանան, կորչին և կամ յուսահատ և ուժասպառ անկարող լինին որ և է գործի ձեռք զարնել, որ չկարողանան իւր ձգտումներին հակառակել։ Աւերակներ էր ուզում, ամայութիւն էր ցանկանում նա, որ ապահով կերպով կարողանար գահ բարձրանալ։ Իսկ այդ օրն ուշանում էր։ Այն ինչ գահի օրինական ժառանգը՝ Գագիկ Բագրատունին օրէ ցօր աւելի էր զօրանում։

Ուստի Սարգիսն շտապել սկսեց։ Անւոյ բնակիչներից և իշխաններից շատերի մտքերը որսաց, համակրութիւնը ձեռք բերաւ, և բռնացաւ հայոց վրայ թագաւորել։ Հայրենիքի շահերին հաւատարիմ իշխանները սարսափով տեսան, թէ ինչ է կատարւում իրանց շուրջը. գաղտնի հաւաքուեցան Պետրոս Կաթողիկոսի մօտ, խորհուրդ արին և որոշեցին մեռած թագաւորի եղբօրորդի Գագիկին թագաւորեցնել, որ այն ժամանակ տասնուվեց կամ տասնևեօթն տարեկան էր։ Մի հնարքով կարողացան նրան Անի քաղաքը բերել և 1042 թ. թագաւոր օծել։

Այս Գագիկը հարուստ ընդունակութիւններով օժտուած երիտասարդ էր. ուսումնասիրել էր Ս. Գիրքը, լաւ տեղեակ էր հելլեն լեզուին և գրութեան. գեղեցիկ էր և վայելչակազմ, առաքինի և վեհանձն, աներկիւղ և հզօր։

Դրա թագաւորելը տեսնելով, Սարգիսն իւր համախոհների հետ Անւոյ ներքնաբերդը մտաւ և այնտեղ ամրացաւ. Տարաւ իւր հետ և արքունի գանձը։ Երևի Սարգիսը կը սպասէր որ Գագիկը զայրացած զօրք ժողովի, պատերազմ հրատարակի իւր դէմ. նա մտածում էր, որ այդ ներքին կռիւների ժամանակ կարող է ևս աւելի կուսակիցներ գտնել և զօրանալ, որ յոյներն էլ վրայ կը հասնեն, կօգնեն իրեն և Գագիկին կը հեռացնեն ու ինքը դարձեալ թագաւոր կը լինի։ Այսպէս էր մտածում Սարգիսը։ Բայց Գագիկը մեն միայնակ, վստահ և համարձակ նրա մօտ գնաց։ Ապշեց, զարմացաւ դաւաճանը. Երիտասարդ թագաւորի անօրինակ համարձակութեան և վեհութեան առաջ դաւաճանն ընկճուեց, խոնարհուեց. Նրա լեզուն կապուեց, ձեռները թուլացան։ Նա անձնատուր եղաւ։ Առաքինի և վեհանձն Գագիկն անձնատուր եղած դաւաճանին ազատ-արձակ բաց թողեց, ներեց նրա չարութիւնները։ Նա կարծում էր, թէ չարագործի համար այդ ամենամեծ պատիժը կը լինի. Նա հաւատում էր, թէ իւր ներողամտութիւնն ու անսահման բարութիւնը կը ճնշի դաւաճանին, բարերար ազդեցութիւն կ'ունենայ նրա վրայ։ Այդպէս են մտածում բոլոր առաքինի և վեհանձն մարդիկը. ապականու-

նպատակն է յիշեցնել թէ այդպիսիներին և թէ առ հասարակ նրանց, որոնց գըրուած են նամակներ, իրենց պարտքերը, խնդրելով որ ըստ կարելւոյն կարճ ժամանակում վերադարձնեն վերցրած գումարները և տեղիք չտան զանազան խիստ միջոցներ ձեռք առնելու։

Նամակագրութեան հասցէն. С. Петербургъ. Екатерининскiй каналъ д. 81 кв. 29. Iоаннесу Мѣдникянъ.

Յովհ. Մետնիկեան։

Յունվ. 20 1895 թ.
Ս. Պետերբուրգ։

* * *

ԲԱԳՈՒԻՑ հեռագրում են.—«Ամսոյս 30 ին սարսափելի հրդեհ ծագեց Քալանթարեանի «Պասաժ» անուանուած կալուածում և ամբողջ շինութիւնը լափեց հրդեհը, որ ծագել էր Լանկոյի երաժշտական գործիքների խանութից. երեսունից աւելի խանութներ իրենց բոլոր արժէքաւոր ապրանքներով այրուած են։ Շինութիւնն ապահովուած է 200,000 ռ. գումարով»։

* * *

Օդեսայի ուսումնարանական շրջանի համար հրատարակուած շրջաբերականների մէջ հաղորդվում է ժողովրդական [illegible]։ Այդ խնդիրը ծագել է գիմնազիոնների աշակերտների քննութեանց վերաբերեալ կանոնների գործադրութեան ընթացքում Օդեսայի ուսումնարանական շրջանում հարց է ծագել թէ ինչպէս հասկանալ այդ կանոնների 67-րդ յօդուածը։ Այդ յօդուածի մէջ բոլորովին արդարացի ասուած է թէ կարող է պատահել որ վերջնական քննութեան ենթարկուող աշակերտը կարող է պատահաբար այս կամ առարկայից անյաջող գրաւոր աշխատութիւն ներկայացնել, բայց մանկավարժական ժողովը չէ կարող այդ հանգամանքի վրայ հիմնուելով աշակերտին տնաս համարել՝ ի նկատի ունենալով նրա անբաւարար շարադրութիւնը այս կամ այն առարկայից։ Այդպիսի դէպքում բերանացի քննութիւնը կարող է հեշտութեամբ ապացուցանել թէ բարձրագոյն կրթութեան համար նախապատրաստուած երիտասարդի գրաւոր աշխատութեան անյաջողութիւնը պատահական է։ Այդ պատճառով ժողովրդական լուսաւորութեան նախարարութիւնն առաջարկում է մանկավարժական ժողովներին «գրաւոր աշխատութիւն» ասելով չհասկանալ միայն մի առարկայից ներկայացրած գրաւոր շարադրութիւն, այլ ի նկատի առնել բոլոր առարկաների վրայ գործ դրուած գրաւոր աշխատութիւնները։ Բացառութիւն պիտի կազմի միայն ռուսաց լեզուն։ «Անբաւարար» ասելով շրջաբերականը մատնացոյց է անում այն հանգամանքի վրայ, որ աշակերտի արժանաւորութեան չափը որոշվում է երկու (2) կամ միաւոր (1) թըւանշանով, որոշ չեն կարող ճիշդ որոշել աշակերտի գիտութեան և զարգացման չափը։

* * *

Մեզ խնդրում են յայտնել, որ կիւրակէ, փետրվարի 5-ին Թիֆլիզի ժողովարանում մի նուագահանդէս է լինելու յօգուտ «Զըրի ճաշարանի», որին կը մասնակցեն քաղաքիս մէջ եղած ամենաընտիր արտիստիքական ոյժերը։ Նուագահանդիսին կը հետևեն պարեր։ Բայց առանց այս հրապոյրի էլ հասարակութիւնը, աչքի առաջ ունենալով նուագահանդիսի այնքան համակրելի նպատակը, անշուշտ բազմութեամբ կը ներկայանայ երեկոյթին։

* * *

ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են.—«Յունվարի 21-ին տեղիս սիրողների խումբը հայոց դպրոցի դահլիճում մի ներկայացում տուեց. խաղացին Գ. Սունդուկեանի «Ամուսինները»։ Զուտ արդիւնք գոյացաւ մօտաւորապէս 50 րուբլի յօգուտ ուսումնարանի։ Դերակատարներից աչքի էր ընկնում իր ընտիր խաղով պ. Կ. Պարզեանցը»։

—Եղանակը մեզանում կատարեալ գարնանային է, մթերքների գինը չափաւոր։

* * *

ՍԱՆԱՀՆԻՑ մեզ հաղորդում են.—«Տփխիսում վախճանուեցաւ Սանահնի վանքի միաբան Յովսէփ վարդապետ Բաշբէուք Մելիքեանը Հանգուցեալը ազնուական ծագմամբ ունէր ժառանգական հողային կալուած այստեղի Ախուլ գիւղումն իւր ազգականների հետ միասին։ Ինձ յայտնի է, որ հանգուցեալը՝ վարդապետ ձեռնադրուելով՝ իւր մասը նուիրեց Սանահնի վանքին, որպիսին և՛ պէտք էր ըստ օրինի, որովհետև սրբակրօն անձանց ժառանգը այն վանքն է համարւում, ուր և ծառայում են։ Բայց արդեօք այդ կ՛անցնի վանքին, թէ՛ [illegible] կը դառնայ, ինչպէս և շատ խոստացած [illegible]։ Հրաւիրում ենք նոցա, ում հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այս հանգամանքի մասին։ Մենք արձանագրեցինք, աշխատողը թող, ըստ պարտականութեան, աշխատէ։»

* * *

ՕՁՈՒՆԻՑ (Լոռի) մեզ հաղորդում են.—Այստեղ սարածուել է երեխայոց մէջ խոզուկ հազ (կօկլիւշ), որ բաւականին նեղացնում է հիւանդներին։ Այս հազով վարակւում են և՛ մեծահասակ մարդիկ, այն էլ զօրեղ կերպով, այնպէս որ ընկնողը հազից ուշաթափւում է։

Օձունից փոքր ինչ հեռու գտնուող Դսեղուտ գիւղումն էլ երեխայոց մէջ [illegible] հիւանդութիւնն է երևացել, որ առանց զոհերի չէ անցնում։ Իսկ Լոռւայ վերին գիւղերումն ծաղիկ է իւր [illegible]ութիւններն անում։ Զալալ Օղլումն էլ [illegible] մահուան դէպք է եղել։ Արդեօք պէտք է յիշեցնել, որ դոցա առաջն առնելու համար նախազգուշացուցիչ միջոցներ են հարկաւոր։

* * *

ՄՂԱՐԹԻՑ (Լոռի) մեզ գրում են. — «Մեր գիւղի կալուածքին սահմանակից է արևմտեան կողմից Կողես գիւղի կալուածքն։ Հին յիշատակարաններն իրանց արձանագրութիւններով արդէն յոյց են տալիս, որ հնումն այստեղ հայեր են բընակուելիս եղել։ Ժամանակի ընթացքում դոքա զանազան հրոսակների չդիմանալով, զանազան կողմեր ցրուեցան, իրանց տեղերն էլ ամայի մնացին, մինչև որ վերջը, այստեղ բնակութիւն հաստատեցին «Մոլոկան» յոյները։ Դոքա սկզբնապէս բնակվում էին Զորագետի պղնձահանքում, որպէս [illegible], ուստի և ազատ էին որքունական թէ հարկերից և թէ այլ և այլ պարտականութիւններից։ Բազմանալով՝ դոքա բնակութիւն հաստատեցին Կողեսի ընդարձակ կալուածքումն, օգտուելով իրանց շնորհած արքունական արտօնութիւններով։ Դոքա թէև պարտաւոր էին իբրև բանուոր Մադանումն բանել, և դորա պատճառով էլ, հարկային պահանջներից ազատ լինել, բայց առօք-փառօք ապրում են Կողեսի արգաւանդ կալուածքում, վայելում են երկրի առատ բերքը, չեն կատարում Մադանում իրանց համար սահմանեալ պարտականութիւնները, բայց և ազատ են ամեն մի հարկային պատասխանատուութիւնից։ Այժմ կառավարութիւնը նկատելով դոցա դրութիւնը, պահանջում է այնպիսի տուրք, ինչպիսի և պահանջվում է շրջաբնակ գիւղերից։ Եթէ յոյները չկատարեն կառավարութեան պահանջը, այն ժամանակ վերջինս մտադիր է, ինչպէս լսվում է, այստեղի բոլոր յոյներին քոչացնել «Մադան», որի համար հողային կալուածքից աւելացնելու է նոցա օգտուելու համար մինչև Սանահնայ կամուրջի ձախ ափը»։

* * *

«Կասպի» թերթն աւետում է բագուեցիներին որ շուտով բացուելու է նաւթային մայրաքաղաքում մի [illegible]։ Այդ բարիքը (12%+X%) շնորհում է քաղաքին վաճառական Գրիգորեանցը։ Առաջին բարերարը եղած է և է պ. Միրզա Աւագեանը։ Երկու վաշխառուական գանձարան և երկուսն էլ հայերի ձեռքով հիմնած. որքան պէտք է ամաչեն հրէաները...

* * *

Թիֆլիզի յունադաւան զինուորական մայր եկեղեցու շինութեան համար մինչև այժմ յատկացրած գումարից 'ի զատ, նոր կրկին յատկացրած է գանձարանից 380,000 ռուբլի։

* * *

Պետերբուրգում փետրվարի 15 ին բացուելիք տպագրական գործի ցուցահանդէսի կարգադրիչ յանձնաժողովը վճռել է մի բաժին բանալ այն [illegible] հրատարակութեանց համար, որոնք գոյութիւն ունին մինչև ներկայ տարուան սկիզբը։

* * *

Թիֆլիզի քաղաքային խորհուրդը իր երկուշաբթի օրուայ նիստերին բազմութեամբ 18 ձայնի 12 ի դէմ որոշեց տալ ռուսաց լեզուի ուսուցիչ պ. Վարդան Սուլթանեանին, իր ինննամեայ բարեխիղճ ծառայութեան համար քաղաքիս արհեստաւորաց դպրոցում միանուագ 600 ռուբլի։ Պ. Սուլթանեանը (հանգուցեալ Իզմիրեանի քրոջ որդին), որ երկար տարիներ աւանդել է ռուսաց լեզուն Ներսիսեան դպրոցում, Արհեստաւորաց դպրոցում և այլ հաստատութեանց մէջ՝ թողնում է միանգամայն ուսուցչական ասպարէզը, որոշած լինելով վերադառնալ իր մայրենի քաղաք Ղզլարը։

* * *

Երկար ժամանակուայ կատարեալ դադարից յետոյ Թիֆլիզում վերջապէս մի [illegible] բաց։ Երեկ առաւօտեան ժամը 5 ից [illegible] կըսած՝ ձիւնն առհաւլեն փաթիլներով ծածկում էր փողոցները, բայց տաք եղանակից կրկին շուտով հալչում։

* * *

«ՄՇԱԿԻ» ՆՈՐ ՆԵՆԳԱՄԻՏ ՈՏՆՁԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

«Մշակ» լրագրի սիւնակներին նորընտիր Պատրիարք Սրբազան Իզմիրլեանի գործունէութիւնը նիւթ է մատակարարում, բայց միևնոյն ժամանակ նա պատրաստում է նրա ղեկավարների սրտում դառն ու կըսկծեցուցիչ մաղձ, որ ակամայ նրանց շրթունքներից ողորմելի աղաղակներ է լսեցնում, որոնց իսկական միտքն այն է, թէ «ինչու Իզմիրլեան սրբազանը վատ ընթացք չունի, որ մի լաւ հայհոյենք նրան»։ Առաջ երբ նոյն իսկ ռուս լրագրները սքանչացան Իզմիրլեան գործունէութեամբ «Մշակը» դեռ լուռ էր, յետոյ սկսեց ներբողներ կարդալ։ Այդ փոքրիկ հրախաղութիւնից յետոյ տեսնելով որ Սրբազան Իզմիրլեանը շնորհակալութեան հեռագիր չի ուղարկում և գործունէութեան նախագիծ չէ խնդրում «Մշակից», այդ լրագիրը մի խուլ որոտմունք լսեցրեց մօտաւորապէս այսպէս՝ թէ ցաւելով լսում ենք, որ Սրբազան Իզմիրլեանը տրամադիր է ընկնել վնասակար, նենգամիտ, ցած, ստոր և այլն և այլն անձանց ազդեցութեան տակ։ «Մշակի» այդ [illegible] էլ չարդարացաւ, որովհետև հէնց այդ յօդուածի երևալուց յետոյ Սրբազան Իզմիրլեանի ամենափառաւոր նոր նոր գործերը աւետող հեռագրները և թղթակցութիւնները երևացին բոլոր լրագրներում և նոյն իսկ «Մշակում»։ Ոնց եղև լաւ և կրճտել ատամանց, տանջվում է «Մշակը» սոսկալի ցաւերով, որովհետև նորընտիր պատրիարքը ոչ մի առիթ չէ տալիս իրեն հայհոյելու։ Բայց ահա պայթում է փքած տիկը և լսեցնում է իր փշշոցը.—«Հայերիս մէջ — կասէ, հերոս դառնալը հեշտ է, Իզմիրլեաններն, ասում է, ուրիշ ոչինչ չէ անում եթէ ոչ, միայն իր պարտքն է կատարում. ergo—մի մարդ, որ իր պարտքը կատարում է նա հերոս չէ, այլ հերոս են այն մարդիկը, որոնք իրենց պարտքը չեն կատարում»։ Այդ խօսքերի մէջ ի հարկէ մենք ճանաչում ենք «Մշակին», որ ամենևին չէ կարող հասկանալ արծուի թռիչքը, այլ ծափ կը տայ և կը ցնծայ տեսնելով ագռաւին արծուի փետուրներով զարդարուած և պատրաստուած «Մշակի» միջոցով ճնճղուկների թագաւոր դառնալու...

Բայց, աւա՜ղ փառաց անցաւորի, հայերի մէջ հերոս դառնալը հեշտ չէ. մի ժամանակ հերոսութեան ոտնձգութիւնն այսօր սպասում են կրկին «[illegible] հանգամանքների» և եթէ նրանց դնէինք այն հանգամանքների մէջ, որոնց մէջ գտնվում է Իզմիրլեան Սրբազանը, նրանք մի թուղթ անգամ, եօթն թոնրով կը խեղդուէին։ իսկ այսօր Կ. Պօլսի մէջ, ուր ամենայն մի հայի վրայ հինգ լրտես կայ, ուր հայ լրագիրը միայն պատրիարքի «հաւատարմական» զգացմունքները գովելու իրաւունքն ունի, ուր ճնշումը մարդկանց ուղեղները և սիրտը սնուցել է անբարոյականութեամբ, այդ երկաթէ վանդակներով կարկամուած շրջանի մէջ պատրիարքական աթոռն է, բարձրանում մի հայ եպիսկոպոս, որ իր պաշտօնի առաջին քայլում գլխից վեր է բարձրացնում իւր եկեղեցւոյ իրաւանց և ազգի ապահովութեան դրօշակը և նա հերոս չէ...

Թէ ինչ անջնջելի պահանջ է դարձել այդ լրագրի արբանեակների համար անպատճառ մի կեղտ ձգել ամեն մի արժանաւոր անձի, և ամեն մի յարմար թէ անյարմար դէպքում անամօթաբար քար ձգել հայ ազգի եկեղեցու վրայ, այդ աւելի երևում է հետևեալ ուշադրութեան արժանի երևոյթից։ «Մշակը» արտատպեց Ադրիանուպոլսոյ դաւաճան հոգևորականների նամակը, որով նրանք աշխատում են իրենց հաւատարմութեան զգացմունքները արտայայտել սուլթանին ու ապացուցանել թէ հայերը Տաճկաստանում երջանիկ կեանք են վարում և այլն։ Այդ նամակը բոլոր լրագրներն արտատպեցին և 'ի հարկէ զզուանք արտայայտեցին այդպիսի հոգևորականների դէմ. բայց «Մշակն» արտատպելով այդ նոյն նամակն, ինչ էք կարծում, ինչ է աւելացնում. հետևեալ տողերը.—«Այժմ մնում է որ հայոց եկեղեցին այդ դաւաճաններին սրբոց դասում տեղաւորէ»...

Եւ ուզում են որ մենք հաւատանք, թէ այդ տեսակ տողեր գրող լրագրական արբանեակները կարող են ընդունակ լինել ճշմարտութիւնը՝ եթէ ոչ խօսելու, գոնէ լսելու։ Ո՛չ, այդ անհնարին է։

Մ—ր—Ա—ց։

ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԲԱՍԵՆ, 10-յունվ.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

—

Դէպի Բուլանըխ գաղթող կողոպտուած, փտրանդուած և գանակոծուած եղկելի հայ քօչւոնները թէ վերստին կը կողոպտուին, կը թալանուէին սահմանակաց ոստիկաններէն և համիդիէ վայրենաբարոյ քրդերէն, այդ արդէն այնքան ընդհանրացած էր, որ առօրեայ պահանջների կարծես կարգն անցած լինէր, և հետևաբար ստրկական ոգու աստիճանին հասած մեր բութ զգացմունք, զգայարանք ընտելացած էին այդ երևոյթներին, այդ արդէն պարզ է քան զօր-ցերեկ. . .

Կը կողոպտուէին նոքա սահմանաբերանի վրայ, անխնայ և անխիղճ կերպով կը ծեծուէին ոստիկաններէն, թուրքերէն և քրդերէն և շատ անգամ ևս ծանր շղթաններ զարկած յետս կը վարէին դէպի Հասանգալայի և Կարնոյ Պաշխանայ բռնուած գնտան բանտերի քունջ ու բուճախներ, և ինչպէս որ այժմ ևս լի է այդպիսի անմեղներով, սակայն նոցա պատիւը դեռ չէր դարձած անիրաւների կրից առօրեայ խաղալիք։

Այսօր կատարուած իրերի դրութիւնը, ցաւօք սրտիւ պիտի յայտնեմ, որ կուգան այդ վերջին յուսոյ և մխիթարութեան հանգամանքն ևս ոչըալու։

Համարեա դեռ երեկ էր, որ գաւառիս Հէքեպատ գիւղի մի գեղանի դուստր՝ Տալի-պապա և քըրդաբնակ Ղարաքիլիսայ գիւղերի մէջտեղ, իրանց գաղթական քօչվանների մէջից անյայտացաւ Ղարաքիլիսացի երեք թուրքի ձեռամբ. . .

Համարեա դեռ երեկ էր, որ գաւառիս Հերթև բազմահայ բնակիչ գիւղի տէրտէրի դուստրը՝ իւր սիրեցեալ եղբօր բազուկների մէջ, կենդանոյն զոհ գնաց Համիդիէ վայրենի գնդապետին և նորա չարամիտ թիկնապահներին։

Դեռ երեկ էր, որ Պուլանըխ և Մանազկերտի գաւառների խեղճուկ հայ գաղթականներէն զէնքի զօրով Համիդիեաններ յափշտակեցին 2 գեղանի նորահարս և երեք դեռատի կոյս աղջկերք Տալիպապ գիւղի վերև, և ցայսօր անգամ աննշմար չքացրին...

Եւ քանի՜ քանի՜ դոյնաման պժգալի երևոյթներ ևս արդեօք թաղուած կը մնան մեր աչքերէն հեռու բռնութեան լուռ վայրերու մէջ. . .

Այս բոլորը, որ միմեանց յաջորդութեամբ եկան ու տեղի ունեցան գաւառիս շրջապատներում այս վերջին ժամանակներս, չեմ սխալուի, եթէ ասելու լինիմ, որ այնքան խորապէս չցնցեց գաւառիս հայ ազգաբնակութեան սրտերն ու զգացմունք, չքամեց շատ աչքերէն արցունքի դառն կաթիլներ, որքան այդ արեց Խնուս գաւառի ազնիւ ու անձնուէր Ա. երիտասարդի և նորա ընտանեաց հետ պատահած դժբաղդութիւնը. . .

Ա.-ն երիտասարդը իւր շիտակ հայութեամբ, ազնիւ և առաջնական բարեմասնութեամբ օժտեալ

թեամբ ցեխի մէջ ընկած, չարագործութեան ձեռները կարմիր ներկած մարդու մէջ անգամ նրանք որոնում են այն [illegible], որ ստեղծուած է ըստ պատկերի և ըստ նմանութեան Աստուծոյ։

Ըմբոստին, չարագործին նրանք չեն պատժում, այլ ներում են, հաւատալով՝ թէ այդ ներողամտութեամբը կարող են նրանց ուղղել, կարող են նրանց սրտերի մէջ խղճի քնած ձայնը զարթեցնել։ Եւ միշտ մենք այն ենք տեսնում, որ ապականուած հոգին իւրն է շարունակում, ներման և բարութեան արժանացած մարդը մեծագոյն յանդգնութեամբ նորանոր չարիքներ է գործում, որով թէ առաքինի մարդու և թէ հասարակաց բարիքի համար գերեզման է պատրաստում։

Այդպէս արաւ և Վեստ Սարգիսը։ Նա գնաց Սուրմառի բերդաքաղաքը, չդարձրեց հայոց թագաւորին այն ամրոցները, որ առաջ ինքը յափշտակել էր։ Բանակցութիւններ սկսեց Յունաց հետ, խոստացաւ այդ ամրոցները նրանց տալ, եթէ նրանք հայոց թագաւորի դէմ զօրք կուղարկեն։ Ինքն էլ սկսեց ասպատակ սփռել դէպ հայոց աշխարհի զանազան կողմերը և աւերել։

Տեսաւ Գագիկը, որ Սարգսի չարութիւններին սահման չկայ, գունդ կազմեց, նրա վրայ յարձակուեց. մտաւ Սարգսի բանակը, նրան բռնեց, Անի քաղաքը տարաւ և բանտարկեց։ Շատ չանցաւ, և ներողամտութեան հոգին դարձեալ զարթնեց. բարի սիրտն իւրը պահանջեց. Գագիկը Սարգսին արձակեց. ապա կեղծաւոր խոնարհութիւնից լաւբուելով, նրան իւր բարեկամ և խորհրդակից ընդունեց։ Խեղճ Գագիկ նա կարծում էր, թէ այդպիսով սպանեց այն օձը, որ բնակութիւն էր հաստատել Սարգսի սրտի մէջ, որդոյութեան հնար էր միայն որոնում, որպէս զի թունաւորելով աւերի շրջակայքը։

Բայց մեծ էր Գագիկի հաւատը. Նա այլ ևս Սարգսից չէր կասկածում։ Սկսեց շրջել իւր տէրութեան զանազան կողմերը, ստահակներին և ըմբոստներին հնազանդեցնել։ Սարգսի ձեռնտուութեամբ յոյներին գրաւած բերդերն ու քաղաքներն առնել։ Սկիւթացոց մեծ զօրքին նիգ գաւառում ջարդ տուեց, և իւր երկիրը խաղաղացրեց։

Բայց լուռ չէր օձը. Նա դարան մըտած՝ իւր որսի վրայ յարձակուելու և նրան թունաւորելու առիթ և հնար էր որոնում։ Սարգիսն անդադար յոյներին էր գրգռում, յիշեցնում էր Յովհաննէս թագաւորի թուղթը, որով Անին յոյներին էր պատկանում։

Մոնոմախոս կայսրը Գագիկ թագաւորի մօտ պատգամ ուղարկեց և Անի քաղաքը խնդրեց։ Սիրով ընդունեց Գագիկը պատգամաւորներին, շատ քաղցր կերպով հասկացրեց, որ այդ պահանջն անիրագործելի է։ Զօրք ուղարկեց կայսրը։ Գագիկը մեծ ջարդ տուաւ և զօրքը փախցրեց։ Երկրորդ անգամ աւելի մեծ զօրք ուղարկեց, Դըւինի Ապուսվար իշխանին էլ մեծ խոստումներով հայոց վրայ շարժեց։ Քաջն Գագիկ այս պատերազմից էլ յաղթող դուրս եկաւ։

Ապա հասկացաւ, որ այդ բոլոր չարութիւնների պատճառը, յոյներին գրգռողը Սարգիսն է։ Բռնեց նրան և կամենում էր խեղդել։ Բայց կամենալուց մինչև կատարելը ահագին տարածութիւն կայ։ Սարգիսը մէջ բերաւ իւր կեղծաւորութեան և շողոքորթութեան ամբողջ տաղանդը, հանդիմացաւ իբր անմեղ գառն, միամիտ աղաւնի, և դարձեալ ազատուեցաւ։

Ազատուելով՝ Սարգիսն աւելի մեծ չարութեամբ սկսեց գործել։ Նա մտածեց իւր նպատակների դէմը կանգնած ոյժը բաժանել, թուլացնել։ Բանասարկու լեզուով սկսեց գրպարտել գահին և հայրենիքի շահերին անձնուիրութեամբ ծառայող իշխաններին։ Թագաւորից բամբասում, գրպարտում էր նրան սիրող իշխանների և կաթողիկոսի մօտ։ Սրանցից խօսում էր թագաւորին, աշխատում էր համոզել, որ կատարուած դժբաղդ դէպքերի պատճառն ու ստեղծողը նրանք՝ հաւատարիմ իշխաններն ու կաթողիկոսն են։ Այնքան արաւ, մինչև թագաւորը հեռացրեց իրանից իրեն նուիրուած հաւատարիմ մարդկանցը։

Երբ տեսաւ, որ իւր նոր ձեռնարկութիւնը յաջող ելք ունեցաւ, գրեց և յայտնեց Կոստանդին Մոնոմախոս կայսերին, թէ հայոց նախարարները Գագիկի հետ միաբան չեն, թէ բաժանումը, ներքին թշնամութիւնն ընդարձակ ծաւալ է ստացել, թէ դիպող ժամ է Գագիկի ձեռից Անին առնել։

Կայսրը գաղտնի պատգամաւորներ ուղարկեց Սարգսի և ուրիշ մի քանի նախարարների մօտ, շատ բաներ խոստացաւ նրանց և խնդրեց, որ դրանք աշխատեն Գագիկին համոզել Անին յոյներին տալու։

Բայց Սարգիսն ու իւր համախոհները տեսնել էին ցանկանում։ Նրանց տենչանքն էր՝ Գագիկին կորցնել, այդ նպատակով միայն նրանք ուզում էին հայրենիքի ազատութիւնը վաճառել։ Եւ ահա թուղթ են գրում կայսրին և խորհուրդ են տալիս նրան, որ բարեկամական սիրալիր նամակ գրի Գագիկին և սիրոյ ու հաշտութեան անունով նրան Կոստանդնուպօլիս հրաւիրէ. դաւաճաններն իրանց կողմից խոստանում էին անձնուէր ծառայութիւն՝ մտադրուած գործի յաջողութեան համար։

Կայսրն ուրախացաւ, տեսնելով՝ որ իւր մտքերն իրագործելու համար հայ իշխանների և նախարարների մէջ համակրողների մեծ թիւ ունի, նա որոշեց՝ ոչ միայն Անին, այլ և ամբողջ Հայաստանը գրաւել և հայոց թագաւորութիւնը բոլորովին վերջացնել։ Երկու անգամ նամակ գրեց Գագիկին. երրորդ անգամ երդվում, Խաչ ու Աւետարան էր երաշխաւոր բերում, որ մշտնջենական հաշտութիւն և խաղաղութիւն պիտի հաստատի և Յովհաննէս թագաւորի խոստման թուղթը պիտի վերադարձնի։ Գագիկը չէր հաւատում։ Վահրամ Պահլաւունի սպարապետը և միւս հայրենասէր նախարարներն անդադար թագաւորին այն էին ասում, թէ կայսրը խաբում է, թէ չպէտք է նրա հրաւէրն ընդունել և Պօլիս գնալ։

Այլ էր Սարգսի և իւր համախոհների խօսքը։ Սրանք ևս անդադար թագաւորի մօտ էին գնում և աշխատում էին համոզել, որ գնայ։ Յոյց էին տալիս, որ եթէ կայսրի հրաւէրը չընդունի, նորանոր պատերազմների պատճառ կը դառնայ և հայրենի աշխարհը երբէք խաղաղութիւն չի տեսնի, իսկ եթէ գնայ, հաշտութիւն կը հաստատի և վերադառնալով հայրենիքի երջանկութեան և բարգաւաճման մասին կը մտածի ու ապահով կերպով կը գործի։ Եթէ կայսրը կը խաբի, ասում էին դրանք, մենք պատրաստ ենք մինչև մեր արեան վերջին կաթիլը քեզ և քո աշխարհը պաշտպանել։

Եկեղեցի մտան, կանգնեցին ս. պատարագի առաջ, Խաչով և Աւետարանով հաւատարմութիւն երդուեցին, երդման թուղթը Քրիստոսի արեամբ գրեցին և ստորագրեցին։

Հաւատաց Գագիկը և Կ. Պօլիս գնաց։ Գնաց և այլ ևս չվերադարձաւ։ Դաւաճանները թագաւորի ետևից Անւոյ բանալիքն ուղարկեցին Յունաց կայսրին։ Զայրացած ժողովուրդը կայսեր ուղարկած առաջին մարդկանցը մի ուժգին ընդդիմութիւն ցոյց տուաւ։ Ապա լսելով, որ Գագիկն ընդ միշտ բատարկուած է, որ թշնամիներին առաջնորդում են երկրի ընիկ իշխանները, յուսահատուեց, նախնեաց սրբազան շիրիմների վրայ ընկաւ, սուգ արաւ և այդպէս արտայայտեց իւր բողոքը։

Այսպէս խարդախ և չարագործ Վեստ Սարգսը իւր փառասիրական նպատակների համար հայրենիքի ազատութիւնը վաճառեց։ Նրան չկարողացան ուղղել ոչ Գագիկի վեհանձնութիւնը, ոչ նրա անսահման բարութիւնն ու ներողամտութիւնը, և ոչ յաւիտենական սրբութիւնները, որոնց անունով երդւում էր դաւաճանը։ Նորան կարող էր ուղղել մի բան՝ մի մահացու հարուած, որ զլացաւ Գագիկը, քանի ժամանակը իւր ձեռքին էր. զլացաւ և դրանով պաշտպանեց դաւաճանին իւր անձի և իւր հայրենիքի կորստեան համար։

Յ. Ճ.

ձիրքերով ու ձգտումներով ոչ միայն հանրածանօթ է Խնուս գաւառին, որ իւր ծննդավայրն է, այլ և Ալաշկերտի, Բասենի և նոյն իսկ Մշու ու Պուլանըխ գաւառներին անգամ իւր քաջարի անուամբ հռչակուած և բարեբաստուած է։ Վերջին տարիներըս, երբ օսմանեան կառավարութիւնը նկատելի կերպով սկսաւ խորապէս կոնձկնձալ, կաշկանձել իւր տկարութեան վերայ, երբ սկսաւ աջ և ձախ հուր և սուր շաղ տալ իւր դարաւոր հլու հպատակ, զինք կերակրող հայ տարրիս վրայ, անձ այդ տարեմուտ սկզբնաժամանակներին Ա. ևս որպէս օսմանեան անհաշտ թշնամի ճանաչուեց իւր տեղւոյս իշխանութեան կողմից։ Նա այնուհետև ափաշկարա դարձաւ զինուոր հայրենիքի. դարձաւ, բայց ստտանդական կեանքի և կենցաղավարութեան պայմաններով, հալածական ծննդավայրից, հայրական օջախից, տարագիր տանից տեղից։

Եւ երբ նա իւր այդ տարագրութեամբ տեսաւ, որ իւր միակ պատճառն՝ ի միջի իւր ծնողաց և ազգականների՝ զուր զոհ պիտի գնայ նաև կինը, նա վճռականապէս բարւոք համարեց ապահովացնել նորա վիճակը, որի եթէ ոչ ներկայութիւնը գոնէ կենդանութիւնն անգամ թէկուզ հեռու սարերի, խեռ մեծ դեր ունէր իւր կեանքի համար։ Եւ այդ վճիռն էր՝ հանել նորան Խնուսից, այլ և օսմանեան հողից և գնել քրիստոնեայ ռուս պետութեան հողի վրայ, ուր նա կեանքի պայմանների մէջ ապահով ապրելով հանդերձ միւս կողմից իւր առջև, տարաբաղդ հայրենիքի մէջ, գործելու աւելի լաւ և աւելի լայն ասպարէզ պիտի բացուէր, ու նա իւր դէպի Կովկաս կատարած ճանապարհորդութիւնը շրջանաւարտելէն յետոյ, երբ գաւառիս վրայով անցաւ դէպի իւր ցանկալի ծննդավայր Խնուս, այնտեղ նա վեր առաւ իւր չքնաղ էակին և գարձեալ գաւառիս գծով եկաւ և պիտի անցնէր իւր որոշած վայր— Ռուսաստան։

Բաղդն այստեղ, հակառակ նորա իղձին, այլ կերպ տնօրինեց։

Երբ Ա. իւր կողակցով միասին մէջ գիշերին կը հասնեն Տալիպապա հայավայր գիւղի վերև և կը մերձենան Թրքա-քրդաբնակ Ղարաքիլիսայ գիւղին, յանկարծուստ Ղարաքիլիսում գետեղուած սահմանապահ զինուորներ՝ ուրիշ ութ զինեալ աբնւարբու քրդերով կը յարձակուեն այդ զոյգի վրայ։

Ա. պատերազմելով կ՚անցնի բաւական տարածութեան վրայ։ Այդ միջոցին բաղդը կը դաւաճանէ նոցա և Ա.-ի սիրուն տատրակը՝ միւս բիւրաւոր նահատակուհիների վիճակով զոհ կը լինի բարբարոս թշնամու հրացայտ գնդակներին։ Նա կընկնի ութ գնդակի վէրք ստանալով... Եւ նորա այդ մանչալի յերկիր թաւալումը աւելի կը բորբոքէ Ա.-ի դաղուած հոգին և նա յետ կը դառնայ դէպի հետևող թշնամուն և ճակատ առ ճակատ վեց անգամ հրացանի բացումով կը սպանէ նոցանէ երկու հոգուն և մէկին ևս մահացու կերպով կը վիրաւորէ։ Թշնամին խոյս կուտայ և այդպիսով, նա վերջին անգամ, միջոց կունենայ լսելու իւր սրտով սիրած սիրեկանի անմոռաց հառաչը, որ այդ միջոցին արդէն կը մաքառէր իւր օրհասականին դէմ... Եւ ապա նորա անշնչութեան վայրկենին կը թողու և խեղակորոյս կերպով կանյայտանայ։

Բ.-ցի։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Յունվարի 27-ից.

ՓԱՐԻԶ.—(«Հաւաս»)—Պատգամաւորների ժողով։ Բանուորական խնդրի համար կազմուած յանձնաժողովի նախագահ Մեզիւրերը թոյլտուութիւն է խնդրում ընդհանրապէս քննելու հանքերի բանուորների դրութիւնը։ Ռիբոն համաձայնում է այն պայմանով, որ յանձնաժողովը խնդիրը անէ օրէնսդրական տեսակէտից։

Տրանսատլանտեան ընկերութեան «Gascogne» շոգենաւը, որ Հաւրից գնում էր Նիւ-Եօրկ տեղ չէ հասել սովորական ժամանակին։ Երրորդ օրն է որ ոչ մի տեղեկութիւն չկայ նրա մասին։ Մեծ անհանգստութիւն է տիրում։

ԲԵՐԼԻՆ.—(«Վոլֆ») Կայսրն այսօր զինուորական ժողովում մի ռեֆերատ կարդաց զօրքի և նաւատորմղի միասին գործելու անհրաժեշտութեան մասին, դրութիւնը ներկայացնելով չին-ճապոնական պատերազմից առած օրինակներով։

ՊՐԱՑ.—Սլաւոնական պատգամաւորները սէյմում յայտարարեցին թէ այլ ևս չպիտի մասնակցեն սէյմի աշխատանքներին և հեռացան նիստի դահլիճից։ Առիթը գերմանական պատգամաւորների քուէարկութիւնն էր գիմնազիօն հիմնելու դէմ, ուր գերմաներէնին համահաւասար պիտի աւանդուի և սլաւոներէն։

ՑԵՏԻՆԷ.—Այն լուրը, թէ առաջիկայում Նիկոլայ իշխանը Պետերբուրգ է ուղևորւում, հիմք չունի։

Յունուարի 27-ին ձանգ-հայից ստացուած հեռագրերը հաղորդում են, որ ճապոնացիները Վէյ-հայ-Վէյի մօտ խորասուզել են չինական երկու զրահակիր նաւ։

Բողդիխանը չինաց դեսպաններին առաջարկել է, որ մնան Նագասակում, մինչև նոր հրահանգներ ստանալը։

ՉԻՖՈՒ.—(«Ռէյտեր»).—ճապոնական նաւատորմը ռմբակոծեց Չիֆուի նաւահանգիստներն և հեռացաւ առանց վնաս պատճառելու։

ԲԵՐԼԻՆ.—(«Վոլֆ»).—Vorwarts թերթը հրատարակել է Վիլհելմ կայսեր մի շրջաբերականը զինուորական վարչութեան ուղղած, որով խստիւ յանդիմանում է զինուորների հետ անխիղճ կերպով վարուելը։

ՍՕՖԻԱ.—(«Նով. Վր.»).—Յանկովի՝ Կոբուրգի պրինց Ֆերդինանդին բարեկամանալու մասին լուրը ճիշտ չէ։

ՓԱՐԻԶ.—(«Հաւաս»)—Մինչև առաւօտեայ ժամը 10-ը դեռ ևս տեղեկութիւն չկար «Gascogne» շոգենաւի մասին։

Յունվարի 28-ից.

ԼՈՆԴՈՆ.—(«Ռէյտեր») 272 ձայնով ընդդէմ 261-ի մերժուեցաւ գահական ճառին անխիլք՝ պատասխան-ուղերձի մէջ Ջեֆրէյի առաջարկած լրացումը, ուր ցաւ էր յայտնւում, թէ կառավարութիւնն ուշք չէ դարձրել երկրագործութեան, արդիւնաբերութեան և բանուորների ցաւալի դրութեան վրայ։ Կառավարչական մեծամասնութիւնը միայն 12 ձայն է։

ՃԱՆԳ-ՀԱՅ.—(«Ռեյտեր»).—Ամբողջ Վէյ-հայ-Վէյը ճապոնացիների ձեռքին է։ Ծովային նաւահանգիստները գրաւուած են։ Չինաց նաւատորմիղը կամ ոչնչացած է կամ յաղթողներն առել են։

Յունվարի 29-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Պետական խորհրդի մէջ խնդիր է քննուելու եկեղեցական-ծխական երկդասեան դպրոցները հաշուելու երրորդ կարգի դպրոցների շարքում, զինուորական ծառայութեան կոչուելու վերաբերմամբ։

Թէոդոսիայում պետական բանկի բաժանմունք է բացուած։

ՀԵԼՍԻՆԳՖՈՐՍ.—Հինգշաբթի երեկոյեան Գանգէից Ստոկհոլմ մեկնած մարդատար նաւը մինչև այժմ տեղ չէ հասել։ Երկիւղ են կրում, թէ մնացել է սառոյցների մէջ։

ԲՈՒԴԱ-ՊԵՇՏ.—Հիւսիսային Հունգարիայում կտրուած հաղորդակցութիւնները չեն վերականգնուած դեռ ևս։ Խիստ սառնամանիք է տիրում։ Երեք հոգի ցրտից սառել ու մեռել են։

ԼՎՈՎ.—Գալիցիական պատգամաւորների ժողովի նիստերի շրջանը փակուած է։ Ճառախօսութիւնների մէջ մատնացոյց էր անվում լեհացիների և ռուսների միասին գործելու վրայ։

Ամբողջ Անգլիայում և Շոտլանդիայում անսովոր սառնամանիք է տիրում։ Թայմսը ծածկուած է գրեթէ միապաղաղ սառուցով։ Աղքատ բնակիչները շատ մեծ նեղութիւններ են կրում։

Իոկոհամայից հաղորդում են «Times»-ին, չինաց կառավարութիւնը պահել է ճապոնիայից վերադարձող պատգամաւորներին, հրամայելով նրանց, որ սպասեն նոր հրահանգների խաղաղութեան մասին բանակցութիւնները վերանորոգելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Թիֆլիզի և Քութայիսի կալուածական բանկերի գրաւաթղթերի գները Պետերբուրգի բորսայում հետևեալներն էին. 6% գրաւաթղթերը—101., 5% գրաւաթղթերը՝ Թիֆլիզինը—98½ գն., Քութայիսինը—99 գն., Թիֆլիզի քաղաքային վարկի ընկերութեան օբլիգացիաններ—98½ գն.,

Յունվ. 30 ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—Երեկ Թագաւոր Կայսրին ներկայացաւ գերմանական կայսեր պալատական հոֆմարշալ Բարոն Էկլոֆշտէյն, որ գերմանական Կայսրից Նորին Մեծութիւններին—Թագաւոր Կայսեր և Թագուհի Կայսրուհուն Ալէքսանդրա Ֆէօդօրովնային բերել էր հարսանեաց ընձայ—սեղանի սերվիզ, որ շինած է կայսերական գործարանում Մեծին Ֆրիդերիկոսի ժամանակի ճաշակով։

«Նովոստին» լսել է որ գլխաւոր բանտային վարչութեան կից կազմուած յանձնաժողովը, որ զբաղուած էր աքսորի հարցի մշակելով, վերջնականապէս կանգ է առել այն մտքի վրայ որ աքսորը պահպանուի միայն արտօնուած դասակարգին պատկանող անձանց համար և աքսորի տեղը լինի Սիբիրի ամենահեռու հիւսիսային նահանգները։

«Սվետը» լսել է որ առաջիկայ գարնան պետք վերանորոգուեն 30% արտօնուած տոմսակները հանքային ջրեր գնացողների համար։

ՄՈՍԿՎԱ.—Այստեղի գործարանատէրերի մէջ գործարանների փոխադարձ ապահովութեան ընկերութիւն է կազմվում։

ՉԵՐՆԻԳՈՎ.—Նահանգական զեմստվօն վճռեց։—Թագաւոր Կայսեր ամենահպատակօրէն ուղերձ մատուցանել. 60,000 րուբլի յատկացնել ժողովրդական գրադարաններ հիմնելու ի յիշատակ Նորին Մեծութեանց պսակադրութեան և 5000 րուբլի Ալէքսանդր III-ի արձանի համար, նոյնպէս աղքատ ազգաբնակութիւնն ազատել 75,000 րուբլի պարտքը վճարելու պարտաւորութիւնից։

ՏՈՄԲՈՎ.—Բօրիսօգլեբսկի զեմսկի ժողովը յատկացրաւ 54,000 րուբլի 20 նոր դպրոցներ շինելու և 44 հազար՝ զեմսկի դեղատների համար։

Կ. ՊՈԼԻՍ.—Այստեղի իշխանութիւնները ենթադրում են թէ շնորհիւ ձեռք առած միջազգային միջոցների և եղանակի ցրտութեան խոլերան հազիւ թէ խիստ համաճարակի կերպարանք ստանայ։

ԼՈՆԴՈՆ.—(«Ռէյտեր») Ճափոնացիք տիրեցին Լի-Կոնգտաօ կղզուն. Խտաօ կղզու վրայ գտնուած վառօդի պահեստը օդը ցնդեց։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիւրակէ օրերից.

ԲԺԻՇԿՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վերաբուժութեան սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Դ. Գ. ԲՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԲԺԻՇԿՆԵՐԸ՝

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Կ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունւում են և ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Նաւասարդեան։

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ

ԱՒԵՏԻՔ ԲԱԲԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիևսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրվում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, ԵԼԵԿՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթօդներ։

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակէ և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը — կինարմատներ և երեխաներ

1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին օտ երեկոյեան — տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժ անող կին և մասսաժիստ պարոն։

Քաղաքային հիւանդանոց

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթևեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. Արծրունի—ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Կ. Ա. Ղամբարեան—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Գ. Գ. Գուլամիրեանց—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր։

Բժշկուհի Գ. Քոչարեանց. սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. Մելքոնեան—ներքին և վեներական, ժ. 12—1 ամեն օր բացի հինգշաբթի։

Բժ. Մ. Ձամկոչեան—ներքին հիւանդութիւն. 12—1 ամեն օր։

Բժ. Գեղամեան — ներքին և երեխանց հինգ. 12-1 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոջաջեանց—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. Կարաման — ներքին և երեխանց, ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Լ. Ե. Մուղդուսեան—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Եղ. Ա. Ռուսո—ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. Ռեթդարմեր—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. Ստեփանեան—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 12—1 ամեն օր։

Գ. Ա. Թադիեան — ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր։

Կին-բժ. Ս. Ա. [illegible]—աչքի և կանանց ժամը 12—1 ամեն օր։

Ատամն. բույժ Ա. Օ. Օզբէկ—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտասիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրեր ժամը 9—1.

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՈՒՄՆՔ

(Կախէթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. Քալանթարեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոջաջեանց—կանանց, ժ 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Բաննիա փողոտ, տ. Ընփիաճեանի)

Գ. Բ. Տէր-Աստուածատրեան—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. Խոջաջեանց—կանանց, ժ 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

Ծանօթութիւն.—Չքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝—
Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բագու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բագու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

Փոստային գնացքը Թիֆլիզից Բաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիզ հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Փոստային գնացքը Բաթումից Թիֆլիզ դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիզ է հասնում ցերեկուայ ժ. և 12-ին 25 ր.։

Փոստային գնացքը Բագուից Թիֆլիզ դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիզ հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Ապրանքա մարդատար գնացքը Թիֆլիզ Գանձակ դուրս է գնում երեկոյեան 7 ժ. 27 ր. հասնում է Գանձակ առաւօտեան 7 ժ. 40 րոպէին։

Ապրանքա-մարդատար գնացքը Գանձակից Թիֆլիզ դուրս է գալիս երեկոյեան 6 ժամին. հասնում է Թիֆլիզ առաւօտուայ 7 ժ. 35 րոպէին։

ՓՕՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ ՎՐԱՑ ՊԵՏԵՐԱԶՄԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Թիֆլիզից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում, Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից՝ հինգ հոգու տեղ ունեցող կառքը ուղևորվում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիզ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորվում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիզ հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան։

ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամէն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի եւ Կ. Պօլսի միջեւ։

Բաթումից դուրս է գնում.

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուա 3 ժ.) շրջանաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով. Նովօրօսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սևաստոպոլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին, ապրանքա մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը—լոյս հինգշաբթի, գիշերուայ 3 ժամին, շրջանաւոր ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Օդեսայից գալիս է Բաթում.

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Չորեքշաբթի և Ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանաւոր ընթացքով։

Երկուշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը, շրջանաւոր ընթացքով,

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ծոտով լոյս կը տեսնի և կ՚ուղարկուի բաժանորդներին

ՀԱՆԴԷՍ

գրականական եւ պատմական ժողովածու

VI ԳԻՐՔԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Դոն Ժուան, երգ առաջին, Բայրընից, Թարգ. Լ. Աբրահամեանի. II Խաչատուր Աբովեանի «Վէրք Հայաստանի» և իմ «Սօս և Վարդիթերը», յիշողութ. Պերճ Պռօշեանցի. III Բանաստեղծութիւններ՝ 1) Գարուն. 2) Նոր սերունդին. 3) Մարգարէ, Լերմոնտովից 4) Թէ իմանայիր.. 5) Կարեկցութիւն, Գէորգ Դոդոխեանի. IV Ստեփաննոս Նազարեանցի նամակներից. V Բանաստեղծութիւններ. 1) Հայրենիքի կարօտը. 2) Գիր, Ալ. Ծատուրեանի. VI Լուկի-Լարաս, վէպիկ յունական ապստամբութեան ժամանակից, Դիմիտրիյ Բիկելասից, Թարգ. Մ. Բ. VII Բանաստեղծութիւններ. 1) Ժան Ժաք Ռուսոյի յիշատակին. 2) Հենրիկոս Թովմաս Բօքլի յիշատակին. 3) «Մեսրովբի տօնին» 4) Կնդուկ պոչատի և Նորա Սանչոյի մկրտութիւնը, Միքայէլ Նալբանդեանի. VIII Պատասխան վաղեմի ընկերիս նամակներիս. IX Մանճակալի երգը, աշըղ Ջիւանու. X Դպրոցական ճանապարհորդութիւն, Իս. Յարութիւնեանի. XI Պօղոս Աւագեանի յիշատակարանը, Խ. Յովհաննիսեանի. XII Ծխականաց ընդհանուր ժողով Մոսկուայում, Մ. Բարխուդարեանի. XIII Սալգատսկի բազարի քննադատին. XIV Այլ և այլք. XV Յայտարարութիւններ.

Յաւելուած. ՅԱՂԱԳՍ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՒԹԵԱՆ, ճառ, Միքայէլի Նալբանդեան։

Հինգերորդ (սակաւաթիւ) և վեցերորդ գրքերի բաժանորդագինն է 3 ռբ., իսկ արտասահմանի համար 8 ֆրանկ. VII և VIII գրքերը լոյս կը տեսնեն միասին առաջիկայ սեպտեմբերին և բաղկացած կը լինին 40 թերթից—640 էջ։ Բաժանորդագինն է 3 ռուբլի։

Ցանկացողները դիմում են հետևեալ հասցէով. Москва, Мясницкая, д. Ермаковыхъ, М. Бархударянъ.

Հրատարակիչ ՄԿՐՏԻՉ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ.

Թիֆլիզի Փոխադարձ Վարկի Ընկերութիւնը

ՀԱՏՈՒՑԱՆՈՒՄ Է

Ընթացիկ հաշուով հասարակ	3%
» » պայմանաւոր	3½%
Դրամական աւանդներով ցպահանջ	3%
» » 6 ամսով	4%
» » 1 տարով և աւելի	5%

ՎԵՐՑՆՈՒՄ Է

Առևտրական մուրհակների զեղչման	7%
Սօլօ-վէքսելների զեղջման, ապահովուած.	
ա) Ապրանքներով	7%
բ) Անշարժ կալուածքներով	7½%
փոխատուութիւնների % թղթերի գրաւականով.	
ա) Պետական բանկից ընդունուող	6%
բ) Տէրութիւնից ոչ ապահովուած	6½
գ) Պետական բանկից չընդունուող	6½
Փոխատուութիւններով ապրանքների և զանազան ստացականների	7%
Փոխատուութիւնների ցպահանջ (on call)	6½%
Մասնաւոր ընթացիկ հաշիւների	
ա) ապահովուած % թղթերով	6½%
բ) » մուրհակներով.	7½%
Տոկոսաբեր թղթերի և կտրոնների զեղջման.	7%
Յանձնարարութիւնների	1/16 մինչև 2%

(3—1)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԿԱՐԳ ԱՍՏՈՒԱԾՊԱՇՏՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

դասագիրք թեմական և ծխական դպրոցների և ընծայարանների համար կազմեց Գիւտ Քահանայ Աղանեանց։

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊԷԿ.

Ազգիս Վեհ. Հայրապետի հրամանով ընդունուած է 'ի շարս դասագրոց եկեղեցական դպրոցաց հայոց։